Ազգ

AZG
armenian newspaper

Յուլիս 28
1992
Երեքշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 64 (156)
գինը 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPRI SU

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. Գրադարան
ՀՍՍՀ-Արմ.ՍՍՀ
Ա. Մեսրոպի անվան

Հայկական ուժերը գրավել են Մեծշեն եւ Մոխրաթաղ գյուղերը

Ստեփանակերտ, 27 հուլիս, «Սնարֆ»։- Առավոտվանից Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերը գործողություններ են ձեռնարկել Մարտակերտ շրջկենտրոնի մոտակայքում ադրբեջանական կրակակետերը ճնշելու համար: Ստացված տվյալներով, գործողությունը հաջող է ընթանում: Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը հաղորդում է, որ հուլիսի 27-ի օրվա երկրորդ կեսին ռազմական գործողությունները շարունակվում էին:

Ինչպես հաղորդում է Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնը, հայկական ուժերին հաջողվել է գրավել Մեծշեն եւ Մոխրաթաղ գյուղերը: Մարտեր են ընթանում Մաղավուզ գյուղի մոտ: ■

Հայաստանն ու Ղարաբաղը այսուհետ կգործեն համաձայնեցված

Այս մասին երեկ կայացած բրիֆինգում հայտարարեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը: Նա նշեց, որ հուլիսի 22-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության անդամների հանդիպման ընթացքում նշվել է միջազգային ասպարեզում փոխհամաձայնեցված գործողությունների անհրաժեշտության մասին, ինչպես նաեւ միահամուռ կարծիք է հայտնվել, որ պետք է վերջ տալ տարբեր քաղաքական խաղերին եւ անցնել միասնական գործողությունների:

Անցած շաբաթ Հայաստանի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության ժամանակավոր հավատարմատար Սիմադ Սոբհանիին: Հանդիպման ընթացքում նշվել է, թե մայիս ամսից հետո հայ-իրանական հարաբերություններում նկատվող սառնությունը կարճատեւ եւ ինչ-որ տեղ արհեստական բնույթ էր կրում: Հայաստանի նախագահը նշել է, որ հայ-իրանական մերձեցումը միանգամայն բնական է, եւ մեր հարաբերություններն Իրանի հետ մշակութային ու հավիտենական են, Իրանը եւ Հայաստանն ունեն ընդհանուր ստրատեգիական եւ ռազմավարական շահեր:

Հուլիսի 25-ին Լ. Տեր-Պետրոսյանն ուղերձներ է հղել Ուրուգվայի եւ Արգենտինայի նախագահներին, ուր կոչ է արել նրանց ավելի գործուն միջամտություն ցույց տալ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանը: Նույն օրը նախագահն ընդունել է Ռուսաստանի ԵԱՀԽ-ի Հռոմի հանդիպման դեսպան Վլադիմիր Կազիմիրովին, որը ներկայացրել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման Ռուսաստանի արտգործնախարարության առաջարկները: Ի պատասխան ռազմական գործողությունների դադարեցման առաջարկին, Լ. Տեր-Պետրոսյանը նշել է, թե առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծել դրա մեխանիզմը եւ սահմանել մշակման միջազգային հսկողություն:

Այնուհետեւ պրն. Շուգարյանը նշեց, որ ի տարբերություն նախորդ ծրագրերի, այդտեղ փորձ է արվում գոնե ռազմական գործողությունների դադարեցման մեխանիզմ մշակել: Բայց չի կարելի սկզբից դեկլարատիվ հայտարարություններ անել այդ մասին եւ հետո սկսել բանակցությունները: Դրանք պետք է միաժամանակ արվեն: Ծրագրերում կա նաեւ այնպիսի կետ, ըստ որի զորքերը երկու կողմից 5 կմ-ով հետ պետք է քաշվեն, բայց այն վայրերում, որտեղ ինքնապաշտպանությունն անհրաժեշտ կլինի, ռազմական գործողությունները կարող են շարունակվել: Սակայն ո՞վ եւ ինչպե՞ս է որոշելու այդ տեղերը, թե դրանցից որոնք են կարեւոր, հստակ չէ: Համենայն դեպս, ուղիներ մշակվում են: Այդ առաջարկությունները ներկայացվել են նաեւ Բաքվում եւ Ստեփանակերտում:

Մամուլի քարտուղարը հաղորդեց նաեւ, որ նախագահի խորհրդական Վահան Փափազյանը հանդիպել է կուսակցությունների ներկայացուցիչների հետ, որի ժամանակ խոսվել է նախագահին կից կուսակցական խորհուրդ ստեղծելու մասին: Այդ գաղափարի հետ համաձայնել են ՀՀՇ-ի, ՀՌԱԿ-ի, Քրիստոնյա-դեմոկրատների ներկայացուցիչները, ԱԻՄ-ը առայժմ պատասխան չի տվել, իսկ ՀՅԴ-ն եւ Հանրապետական կուսակցությունը պահանջել են, որ այդ խորհրդին որոշակի կարգավիճակ տվյալ:

Հ. Ա.

Լեռնային Ղարաբաղ. Կռիվները Մարտակերտում շարունակվում են

Ադրբեջանցիները խեղաթյուրում են փաստերը

Լեռնային Ղարաբաղի հայկական կազմավորումները հուլիսի 27-ի առավոտից սկսել են պատասխան գործողություններ հայկական տարածքներն ազատագրելու համար: Ինչպես հայտնել է Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը, կիրակի գիշերը ադրբեջանցիները գնդակոծել են Մարտունի շրջկենտրոնը եւ շրջանի երկու գյուղեր: Չորս հոգի վիրավորվել են:

Մյուս կողմից, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է Աղդամի վրա հայկական ուժերի հարձակման մասին: Գրոհներին, որոնք ադրբեջանական ուժերը առայժմ կասեցնում են, մասնակցում է 50 միավոր զրահատեխնիկա: Խփվել է իր մեկ Տ-72 տանկ, շարից դուրս է բերվել մեկ ծանր հրետանի: Նախարարությունը հայտնում է նաեւ, թե իր ադրբեջանական ուժերը շարունակում են վերահսկել Սարսանգի ջրամբարը: Անցած օրը Մարտակերտի շրջանում ադրբեջանցիները տվել են 2 սպանված, 5 վիրավոր:

Ինչպես հայտնում է «Թուրան» գործակալությունը, հայերի կողմից Ֆիզուլու շրջանի Խաթինբուլաղ գյուղի գնդակոծման հետեւանքով մեկ բնակիչ սպանվել է: Պատասխան կրակով ադրբեջանական կողմը իր ոչնչացրել է մեկ հրետանային կայանք:

Ըստ Ադրբեջանի պաշտպանության նախարարության, հուլիսի 26-ի երեկոյան հանրապետության ինքնապաշտպանության ուժերը կասեցրել են Հայաստանի ազգային բանակի ներխուժումը Գեսաբեկի շրջան: ■

Բոսնիայի իսլամ եւ սերբ ղեկավարները Լոնդոնում

Բոսնիա-Հերցեգովինայի երկու համայնքների՝ իսլամների եւ սերբերի ներկայացուցիչները երեկ հանդիպեցին Լոնդոնում, եւրախորհրդի հատուկ բանագնաց լորդ Քարինգտոնի ներկայությամբ, որ նախորդ օրը հայտարարել էր, թե աշխատելու է սահմանադրական լուծում գտնել տագնապին: Անցնող երկու օրերին մայրաքաղաք Սարայեւոյում համեմատական անդորր էր, բացի Դոբինջա արվարձանից, որտեղ սերբերը շարունակում են ճնշում բանեցնել: Մյուս կողմից, ՄԱԿ-ի ուժերը հրաժարվեցին ցամաքով Գորաժդե ուղարկված քաղաքին մարդասիրական օգնություն հասցնելու մտքից: Երեկ Գերմանիա հասան եւս 2 հազար բոսնիացի փախստականներ, ջրազերծված եւ ուժասպառ: Գերմանիայում արդասան են գտել շուրջ 7 հազար բոսնիացիներ: ■

Կրկին գնդակոծվում է Արծվաշենը

Նախիջեւանից ռազմական ուղղաթիռները ներխուժել են Հայաստան

Տաթեւ. Հուլիսի 26-ի երեկոյան ժամը 9-ին Ադրբեջանի Թռուզի շրջանում տեղակայված կրակակետերից սկսվել է շրջանի Մոլսես, Այգեղար եւ Ներքին Կարմիրաղբյուր գյուղերի գնդակոծությունը: Մոտ մեկ ժամ տեւած գնդակոծություններին հակառակորդ կողմից մասնակցել են նաեւ զրահամեքենաները: Գնդակոծությունները վերսկսվել են գիշերվա ժամը 12-ին եւ շարունակվել երկու ժամ: Հայկական ինքնապաշտպանական ուժերը ստիպված պատասխան կրակ են բացել: Երեկվա ընթացքում շարունակվել են ավտոմատային եւ գնդացրային կրակահերթերը շրջանի գրեթե բոլոր սահմանամերձ գյուղերի ուղղությամբ: Հայկական կողմից տուժածներ չկան:

Մեղրի. Հուլիսի 26-ի երեկոյան Ադրբեջանի Զանգելանի շրջանի Մինջեւան բնակավայրից գնդակոծվել է շրջանի սահմանամերձ Նյուվադի գյուղը, որի հետեւանքով գյուղի պաշտպաններից երեքը վիրավորվել են: Երեկվա ընթացքում իրավիճակը համեմատաբար հանգիստ է եղել:

Կրասնոսելսկ. Հուլիսի 26-ին Ադրբեջանի տարածից ուժգին գնդակոծության եւ հրետակոծության է ենթարկվել Արծվաշենը, որի հետեւանքով երկու հոգի բերեթ վիրավորվել են: Կան ավերածություններ, գյուղում բանդվել է երկու տուն: Նույն օրը ադրբեջանցիներն ամբողջովին փակել են Արծվաշենը շրջկենտրոնին միացնող ճանապարհը եւ դիրքավորվել ճանապարհի եզրին: Հայկական ինքնապաշտպանական ուժերն առայժմ ձեռնպահ են մնում պատասխան քայլերից:

Վայք. Երեկ ժամը 13:30-ին ադրբեջանական երկու ռազմական ուղղաթիռներ Նախիջեւանի տարածից խախտել են Հայաստանի օդային սահմանը եւ կարճատեւ գնդակոծության ենթարկել Վայքի սահմանային պահակակետերը: Տուժածներ չկան: Ուղղաթիռները հեռացել են Նախիջեւանի հյուսիսում գտնվող Շաբա գյուղի ռազմակայանի ուղղությամբ: ■

Հայաստանում սպանվել է ռուսական բանակի սպա

Կիրակի օրը Բալահովիս գյուղում անհայտ անձանց կողմից սպանվել է ռուսական բանակի մայոր Զայցեւը: Այդ մասին «ԻԴ»-ի թղթակցին հայտնել է Անդրկովկասյան զինվորական օկրուգի լրատվական վարչության պետ Վասիլի Բելչենկոն: Նա ասել է, որ *«թեեւ Հայաստանի ղեկավարությունը հավատիացնում է մեզ, թե կգտնի հանցագործներին, կոնկրետ ոչինչ չի արվում»:* Բելչենկոն հիշեցրել է նաեւ, որ մինչեւ այսօր չեն գտնվել երկու շաբաթ առաջ Գյումրիում 5 զինծառայողների սպանության մեղավորները:

Միաժամանակ, Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից հայտնեցին, որ Բալահովիսում կատարված հանցագործությունը բացահայտելու նպատակով հետաքննություն է կատարվում, եւ, ըստ նախնական տեղեկությունների, արդեն ձերբակալվել է նույն գյուղի բնակիչներից մեկը, որը մեղադրվում է հանցագործության մեջ:

Իհարկե, հանցագործությունը կբացահայտվի, եւ մեղավորները կպատժվեն: Ցավալին այն է, որ այն ժամանակ, երբ Հայաստանի պաշտպանության նախարարությունը ամեն կերպ աշխատում է նորմալ հարաբերություններ պահպանել ռուսական բանակի եւ մասնավորապես Հայաստանում տեղաբաշխված 7-րդ բանակի հետ, նման սադրանքներն սպառնում են խոչընդոտել այդ ասպարեզում հնարավոր համագործակցությունը: ■

Բաքու. Թալիշները մշակութային ինքնավարություն են ուզում

Բաքվում տեղի ունեցավ Ադրբեջանի թալիշների ժողովրդական կուսակցության հիմնադիր համագումարը, հաղորդում է «Սնարֆ»-ը: Թալիշները պարսկալեզու ժողովուրդ են, որոնք ապրում են Ադրբեջանի հարավում եւ Իրանի հյուսիսում: Նրանց ընդհանուր թիվը 500 հազար է: Կուսակցության գլխավոր նպատակը թալիշների համար մշակութային ինքնավարության հասնելն է, միջազգային նորմերին համապատասխան իրավունքների ձեռքբերումը: Համագումարը հաստատեց կուսակցության ծրագիրը եւ կանոնադրությունը, ընտրեց կուսակցության կենտկոմ 43 անդամներով: ■

Մտավորականների հավաք. մասնակցում էր նախագահը

«Մտավորականությանը տրված է իրավունք. օգտվեք դրանից»:

Այս կարգախոսով անցավ երեկ Արամ Խաչատրյանի տուն բանգարանի ճեմասրահում անցկացված հանդիպում-բանավեճ-մտքերի ազատ փոխանակությունը: Նախաձեռնողը թեեւ ՀՀԵՆ-ն էր, բայց ինչպես իր բացման խոսքում հայտարարեց Կարեն Յուզբաշյանը, հրավիրվել են բոլոր նրանք ովքեր իրենց զգում են մտավորական:

Միջոցառմանը ներկա մտավորականության ամենատարբեր խավերի ներկայացուցիչները արտահայտվեցին երկու հիմնական ուղղությամբ: Մի կողմը նշեց ներկա իշխանությունների եւ հատկապես ՀՀԵՆ-ի թույլ տված սխալները, մյուս կողմը կոչ արեց, որ մտավորականությունն ինքը լինի նախաձեռնող, նախահարձակ եւ վեր կանգնի կենցաղից ու համակերպվի իրականությանը:

Եղույթ ունեցավ նաեւ հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, բարձրացնելով պետության ու մշակույթի եւ մտավորականության ու հասարակության հարաբերությունների հարցերը: Նախագահը հայտարարեց թե մտավորականության գոյության պայմանը ազատությունն է, եւ եթե այն կա, պետք է օգտվել նրանից: Հ. Ա.

Իրաք-ՄԱԿ կոնֆլիկտը լուծվեց

Երեք շաբաթ տեւած կոնֆլիկտը բարեհաջող ավարտ ունեցավ. Բաղդադը երեկ թույլ տվեց ՄԱԿ-ի ֆինչներին, որ քիմիական զենքերի մասին արձանագրություններ ստուգելու նպատակով այսօր մուտք գործեն գյուղատնտեսության նախարարություն, պայմանով, որ հաղորդիչներ չպատկանեն այն երկրների թվին, որոնք Ծոցի պատերազմում կռվել էին Իրաքի դեմ: Վաշինգտոնում նախագահ Բուշը հայտարարեց, թե ի վերջո *«երկարատեւ հոխորտանքներից հետո Սադդամ Հուսեյնը տեղի տվեց»:* Իսկ Բաղդադում այս վերջինը «իրական հաղթանակ» կոչեց գոյացած համաձայնությունը, միաժամանակ հավատաղանգիներին զգուշացնելով, որ *«բոլոր ճակատամարտերի մայր պատերազմը»* շարունակվում է: Ավելորդ չի լինի հիշեցնել, որ հակառակ կայացած համաձայնության, Պենտագոնում ամերիկյան ստրատեգները շարունակում են նախագահ Բուշից հարձակման ազդանշան ստանալու դեպքում իրական թիրախներին հարվածելու ծրագիր մշակել: ■

Ճապոնական ընտրություններում հաղթեցին ռամկավարները

Ճապոնիայում իշխող Ռամկավար ազատական (լիբերալ դեմոկրատ) կուսակցությունը խորհրդարանի վերին պալատի ընտրություններում զգալի մեծամասնության տիրացավ, երեք տարի առաջ կրած պարտությունից դուրս գալով: Այդ հաղթանակը թեեւ ձայների ընդամենը 48 տոկոսն է կազմում, սակայն անհամեմատելի է մյուս կուսակցությունների արդյունքների հետ: Այնուհանդերձ, ճապոնական ՌԱԿ-ը ստիպված է խորհրդարանում դաշնակիցներ գտնել կայուն կառավարություն ստեղծելու համար: ■

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Կոլումբիայում թմրադեղերի մաֆիայի «արֆա» էսկոբարը երեկ նոր պայմաններ դրեց կալանավայր վերադառնալու համար, որտեղից փախել էր 4 օր առաջ: Կառավարությունն էսկոբարից պահանջեց առանց որեւէ պայմանի վերադառնալ բանտ:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին առաջարկեց հասկանալի օգնության արշավ կազմակերպել դեպի Սոմալի, որտեղ իր կազմակերպության տվյալներով, երաշտի եւ այլ պատճառներով, 1,5 միլիոն մարդ ներկայումս գտնվում է սովամահության եզրին: Կիրակի օրը ՄԱԿ-ը սննդամթերք, ջուր եւ բժշկական օգնություն ցույց տվեց 351 սոմալիցիների, որոնք 5 օր էին գտնվում Քենիայի ծովափում: ■

Իտալական հազարավոր դեսանտայիններ Սիցիլիայում

Մաֆիայի դեմ կռվելու համար իտալական կառավարությունը հազարավոր դեսանտայիններ իջեցրեց Սիցիլիա կղզում: Ինքնաթիռներով զինված պարաշյուտիստների ելքը պետական հեռուստատեսություն եւ մամուլ պատճառ դարձավ, որ լրագրողները վերհիշեն Մուսոլինիի գործելակերպը, երբ Իտալիայի բռնապետը 1920-ական թթ. զորք էր ուղարկել Սիցիլիա: Հռոմի իշխանությունները վստահեցրին, որ նպատակ չունեն ռազմականացնելու կղզին: ■

digitised by A.R.A.R.@

Պետական կյանք

Լուծարո՞ւմ, թե վերակազմավորում

Էկոնոմոեսկոմ-էկոնոմնախարարության վեճը շարունակվում է

Մեր թերթի փետրվարի 29-ի համարում տպագրել էինք *«Էկոնոմոեսկոմ-էկոնոմիկայի նախարարության խաղերը կամ ո՞վ ղիսի հաստոցի վնասը»* վերտառությամբ մի հոդված, որտեղ խոսք էր գնում այն մասին, թե ինչպես էր էկոնոմիկայի պետական կոմիտեն դարձել էկոնոմիկայի նախարարություն, եւ թե որքանով էր դա օրինական: Բանն այն է, որ էկոնոմոեսկոմը նրա նախագահ Հրանտ Բագրատյանի հրամանով լուծարվել էր, մինչդեռ իրականում տեղի էր ունեցել ոչ թե լուծարում, այլ վերակազմավորում: Այնինչ, սրանց միջեւ էական տարբերություն կա. լուծարման դեպքում անխտիր բոլոր աշխատողներն ազատվում են աշխատանքից եւ որոշ ժամանակ (մեկից երեք ամիս) նպաստ ստանում միջին աշխատավարձի չափով: Վերակազմավորման դեպքում այդպես չէ: Էկոնոմոեսկոմի՝ էկոնոմիկայի նախարարության վերակազմավորման ժամանակ գրեթե բոլոր աշխատողները միաժամանակ եւ նպաստ էին ստացել, եւ լուծարման պահից ընդունվելով նոր աշխատանքի՝ աշխատավարձ: Այն ժամանակ այդպես էլ չհաջողվեց պարզել, թե այդ «անճշտությունների» հետեւանքով որքան է տուժել պետությունը, թայց հոդվածում մտավախություն էր հայտնվում, որ այդ «անճշտությունները» կարող են խրոնիկական դառնալ:

Մտավախությունն իզուր չէր: Վերջերս խմբագրություն եկավ սննդի արդյունաբերության նախարարության նախկին արխիտեր Միշա Փահլեւանյանը եւ խնդրեց տպագրել մի հոդված, որը, սակայն, ավելի նպատակահարմար համարեցինք ոչ թե տպագրել ամբողջությամբ, այլ պարզաբանել էությունը:

Ինչպես պարզվեց հոդվածից եւ կից ներկայացված վաստաթղթերից, 1992 թ. փետրվարի 10-ին սննդի արդյունաբերության նախարարության բոլոր աշխատողները ծանուցագրեր են ստացել, համաձայն որոնց նրանք նախարարության լուծարման կապակցությամբ արդիլի 10-ից ազատվում են աշխատանքից: Իհարկե, այստեղ իրականում լուծարման մասին խոսք լինել չի կարող, որովհետեւ նախարարության ֆունկցիաների անհրաժեշտությունը չի վերանում: Իրականում տեղի է ունեցել սննդի արդյունաբերության նախարարության եւ հացամթերումների նախարարության պարզ միավորում: Ստեղծվել է պարենի եւ մթերումների նախարարություն: Այսինքն՝ տեղի է ունեցել ոչ թե լուծարում, այլ վերակազմավորում: Տվյալ դեպքում դրանց տարբերությունը նաեւ այն է, որ երբ հիմնարկը ոչ թե լուծարվում է, այլ վերակազմավորվում, հաստիքների կրճատման դեպքում հաշվի է առնվում աշխատանքում թողնելու օրենսդրությամբ նախատեսված նախապատվության իրավունքը: Հարցը «խնամիական ոգով» լուծելը բացառվում է: Մինչդեռ, այս դեպքում, ինչպես պնդվում է հոդվածում, նորաստեղծ նախարարության նախարարի պաշտոնակատար Ռաֆիկ Շահբազյանը պարզապես վարչությունների պետեր է նշանակել եւ ասել. *«Դուք ում ուզում եք, նրան էլ վերցրեք»*: Ցավոք, կադրերի ընտրման նման եղանակը մեզանում բավականին մեծ տարածում է գտել, եւ դրա հետեւանքներն արդեն այսօր երեւում են: Հոդվածին կից հեղինակը ներկայացրել էր նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահին, վարչապետին ու պարենի եւ մթերումների նախարարի պաշտոնակատարին ուղղված մի դիմում, որտեղ խնդրվում էր նախարարության ղեկավարության կողմից աշխատանքային օրենսդրության նորմերի կոպիտ խախտումների դեպքերը պարզելու համար հանձնաժողով ուղարկել: Դիմումը, որի տակ 8 ստորագրություններ կան, մինչեւ այժմ անպատասխան է մնացել:

Ամենից շատ զարմացրեց այն, որ, ըստ Միշա Փահլեւանյանի, լուծարվել է նաեւ գերատեսչական արխիտեկտը եւ փոխարենը ոչինչ չի ստեղծվել: Պրն. Փահլեւանյանը դա բացատրում է նրանով, որ Հայաստանում այսօր մեծ անօրինականություններ են կատարվում, եւ արխիտեկտը կարող էր պայքարել դրանց դեմ: Իսկապես, տնտեսական վեճեր ու տարաձայնություններ միշտ էլ լինելու են եւ հանրապետության ներսում, եւ, առավել եւս, միջպետական տնտեսական հարաբերություններում: Ուստի, արխիտեկտի բացակայությունը տարակուսանք է հարուցում:

Ինչեւէ: Հույս ունենանք, որ այս հրապարակումը գոնե փոքր-ինչ կնպաստի նրան, որ վերջապես ստեղծվի հանձնաժողով՝ վերը նշված հարցերն ուսումնասիրելու համար:

Ա. Բ.

Իրանահայ համայնք. հանդիպումներ, զրույցներ, տպավորություններ

«Իրանը արգելքներ չի դնում մեր համագործակցությանը»

ասում են իրանահայ գործարարները

Դեռ մեկ ամիս առաջ, երբ վերադարձա Իրանի Իսլամական Հանրապետությունից, անմիջապես չանդրադարձա հայ համայնքին՝ իմ ունեցած բազմաթիվ հանդիպումներին, բանզի մտավախություն ունեի, թե կարող են առաջին տպավորությունները խաբուսիկ լինել: Հիմա ժամանակն է, որովհետեւ հարափոփոխ բաղաքական կյանքը իր սրբագրումներն է մտցնում ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ Սփյուռքի բաղաքական ու հասարակական կյանքում: Դժվար չէ կռահել, որ շատ հարցերում սփյուռքահայերի եւ մանավանդ իրանահայերի մոտ Հայաստանի եւ նրա իշխանությունների նկատմամբ ձեւավորված կլինի նոր դիրքորոշում:

Արդեն իսկ զգալով անցածի եւ գալիքի տարբերությունը, այնուամենայնիվ փորձենք ամբողջացնել մեր ունեցած հանդիպումները: Իրան մեկնելուց առաջ բաջատեղյակ էի, որ տեղի հայ գաղթօջախը հիմնականում գտնվում է Հայ հեղափոխական դաշնակցության ազդեցության տակ եւ թվում էր, թե որեւէ ներքին հակասություն չի լինի: Բայց, ինչպես հետո երեւաց, Իրանի հայ գաղթօջախն էլ անմասն չէ այն ներքին խլրտումներից, որոնք նորոշ են մյուս գաղթօջախներին:

Առաջին փաստը, որը կաղված հայի անվան հետ եւ որի մասին լսեցինք դեռ Ջուլֆայում, «Sati» երգն էր: Բայց նրա գլխավոր օրեն Լեւոն Սահակոնյանը, որ վերջերս եղել էր Հայաստանում ու մասնակցել գործարար մարդկանց հանդիպմանը, աղրում էր Թեհրանում, որտեղ էլ գտնվում էր «Sati»ի կենտրոնական գրասենյակը: Պարոն Սահակոնյանի հետ հանդիպեցի իր աշխատասենյակում: 1961 թ. նա եկել «Sati» եւ մինչեւ օրս գլխավորում այդ տրանսպորտային, նախկինում նաեւ տուրիստական հասարակությունը, որը փաստորեն ընտանեկան ընկերություն է եւ բաժնետոմսերի 78 տոկոսը պատկանում է իր ընտանիքին, իսկ 22 տոկոսը՝ հասարակության մյուս պաշտոնյաներին: «Sati»ն իր մասնաճյուղերն ունի ոչ միայն Իրանի ոչ խոշոր եւ նավահանգստային քաղաքներում, այլեւ արտասահմանում: Ֆիրման «Յաբա» համաբխարհային օդանավային ասոցիացիայի անդամ է, երկու գործարան ունի մեկը Սպահանում, մյուսը՝ Թեհրանում: Բեռնափոխադրումները կատարվում են ոչ միայն երկրի ներսում, այլեւ դրսում: «Sati»ն իր ձեռքում է կենտրոնացրել նաեւ Ջուլֆայից ստացվող բոլոր փոխադրումները: Դա Իրանի միակ խոշոր ընկերությունն է, որ կարող է միանգամից 450 տոննա բեռ տեղափոխել: *«Ես իբրեւ տնօրեն առաջին մարդն էի, որ 1991 թվականի մարտ ամսին եկա Երեւան եւ հանդիպեցի նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանին,* այստեղ սկսեց ծանոթացնել իր աշխատանքներին պրն. Սահակոնյանը: *Մենք ընդարկեցինք Մեղրու կամրջի բացման հարցը: Վարչապետը ինձ հետ յոթ հոգուց բաղկացած մի պատվիրակություն ուղարկեց Մեղրի, տեղում ուսումնասիրեցինք վիճակը, եւ ես առաջին զեկույցը պատրաստեցի Իրանի տրանսպորտի եւ ճանապարհաշինության նախարարության համար: Զեկուցագրեր հանձնեցի նաեւ Իրանի առեւտրական պալատին, արտգործնախարարությանը եւ «Մուսազաֆան» հասարակությանը: Այնուհետեւ մեր պատգամավորներ Վարդան Վարդանյանն ու Արտավազդ Բաղումյանն ավելի բարձր մակարդակով բարձրացրին այդ հարցը, եւ մի քանի պատվիրակությունների փոխադարձ այցելություններից հետո խնդիրը ասիճանաբար լուծում ստացավ: Բայց, կամուրջին զուգահեռ, շարունակեց նա, պետք է անդրայման թոիչքներ կազմակերպել, որպեսզի 1.5 ժամը 2 օր չտեւի: Ես հուսով եմ, որ մենք օդանավ կվարձենք եւ 10 օրը մեկ թոիչք կկազմակերպենք* (ինչն արդեն իրողություն է դարձել.-Հ.Ա.): *Դա կօգնի նաեւ Հայաստանի տնտեսության զարգացմանը: Ի դեպ, Հայաստանն այդ հարցում կարող է տարանցիկ դեր կատարել Բաքումից եւ Փոքրից բեռների տեղափոխման հարցում: Բուն Հայաստանից կարելի է կազմակերպել մայուխների, պղնձի, ալյումինի, ցեմենտի փոխադրումներ, իսկ Իրանից ստանալ մազութ: Դրանում շահագրգռված են նաեւ իրանցիները: Գազամուղի նախագծի ավարտից հետո ինձ թվում է կսկսվեն նաեւ գազ ստանալու նախապատրաստական աշխատանքները: Որքան ինձ հայտնի է, այդ խնդրի ֆինանսավորման հարցը պետք է լուծեն Եւրոպայի հայերը: Իրանի կողմից որեւէ արգելք չկա»:* Ես հարցրեցի պրն. Սահակոնյանին, թե այդ տնտեսական համագործակցության ➡

«Ռազան» ընկերության նախագահ Լեւոն Բաղումյանը

մանը: Ի դեպ, Հայաստանն այդ հարցում կարող է տարանցիկ դեր կատարել Բաքումից եւ Փոքրից բեռների տեղափոխման հարցում: Բուն Հայաստանից կարելի է կազմակերպել մայուխների, պղնձի, ալյումինի, ցեմենտի փոխադրումներ, իսկ Իրանից ստանալ մազութ: Դրանում շահագրգռված են նաեւ իրանցիները: Գազամուղի նախագծի ավարտից հետո ինձ թվում է կսկսվեն նաեւ գազ ստանալու նախապատրաստական աշխատանքները: Որքան ինձ հայտնի է, այդ խնդրի ֆինանսավորման հարցը պետք է լուծեն Եւրոպայի հայերը: Իրանի կողմից որեւէ արգելք չկա»: Ես հարցրեցի պրն. Սահակոնյանին, թե այդ տնտեսական համագործակցության ➡

Լեռնային Ղարաբաղում մարտերը շարունակվում են զրահատեխնիկայի օգտագործումով

Ինչպես հաղորդել է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, շաբաթ եւ կիրակի օրերին հայկական կողմը զանգվածային հրթիռահրետանային հարված է հասցրել Աղդամ քաղաքին եւ Արդաղ, Գյուլոպլու եւ Խրամորթ բնակավայրերին: Վեց բնակիչ սպանվել է, ութը՝ վիրավորվել:

Ադրբեջանական ռազմական գերատեսչությունը հաղորդում է, որ կիրակի օրը հայկական զինված ուժերի հրաձգային դիվիզիան 30 զրահամեքենաների ուղեկցությամբ հարձակման է անցել Ասկերան-Խանաբադ-Աղդամ ուղղությամբ: Գյուլափլու գյուղի մոտակայքում հարձակումը կասեցվել է: Պաշտպանության նախարարության տվյալներով, հայկական կողմը կորցրել է երեք ինքնագնաց հրանոթային կայանք, երկու ծանր հրետանային հրանոթ, երկու շարժական «Գրադ» կայանք, երեք հետեւակի ռազմական մեքենա եւ երկու T-72 տանկ:

Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը հաղորդեց, որ հուլիսի 26-ին ադրբեջանական բանակի ստորաբաժանումն անհաջող փորձ է կատարել շարժվել դեպի Թար-Թար ՀԷԿ-ի ամբարտակ: Հարձակումը հետ մղելու ժամանակ խփվել է հակառակորդի մեկ T-72 տանկ: ■

2500 ադրբեջանցի կսովորեն Թուրքիայում

Ադրբեջանցի 2500 դիմորդներ սեպտեմբեր ամսին միջկառավարական համաձայնագրի հիման վրա կմեկնեն Թուրքիայի համալսարաններում ուսումնառության: Այդ մասին հայտարարել է Ադրբեջանի հումանիտար հարցերով պետական խորհրդական Ռաֆիկ Իսմայիլովը: Նա նաեւ հայտնել է, որ այս տարի արդեն 300 ադրբեջանցի ուսանողներ թուրքական բուհերում ավարտել են ուսումնական առաջին տարին: ■

Նավթի խոշոր շահաբաժինը մնում է Ադրբեջանին

«Ազերինավթ» կոնցեռնի եւ արեւմտյան նավթային ֆիրմաների միջեւ շարունակվում են բանակցությունները շահույթի բաժանման հարցերի շուրջը: Ինչպես հաղորդում է Ադրբեջանի ժողովական «Ազադլիկ» թերթը, ադրբեջանական կողմը հավակնում է վերցնել շահույթի 85 տոկոսը, իսկ արեւմտյան ֆիրմաները՝ մնացած 15-ը: Արեւմտյան ֆիրմաների միջեւ շահույթը կբաժանվի հետեւյալ ձեւով. ամերիկյան «Ամոկո» ֆիրման նախատեսում է մնացած 15 տոկոս շահույթի 45 տոկոսը, «Յունիկոլը» (ԱՄՆ)՝ 25 տոկոսը, «Մակ Դերմոտը» (ԱՄՆ)՝ 10 տոկոսը, իսկ Բրիտանական «Բրիթիշ Փեթրոլիում», «Ռենկո» եւ նորվեգական «Ստատոյլ» ընկերությունները միասին՝ 20 տոկոսը: Ամերիկյան «Ամոկոն», հաղորդում է թերթը, հանդես է գալիս որպես արեւմտյան կողմի աշխատանքների համակարգող: ■

Վնասը գնահատվում է գրեթե 51 մլն ռուբլի

Ադրբեջանում այս տարվա առաջին 6 ամիսների ընթացքում արտադրության անկումը անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կազմել է 21,8 տոկոս: Փաստացի գների հաշվարկով վնասը գնահատվում է գրեթե 51 միլիոն ռուբլի: Հանրապետության վառելիքաէներգետիկ համակարգում 6 ամիսների ընթացքում, 1991 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, արտադրվել է 15,5 տոկոսով ավելի հիդրոէլեկտրաէներգիա: Նավթի արդյունահանումը կրճատվել է 4,7 տոկոսով, գազինը՝ 8,8: Երկաթի արտադրությունը իջել է 27,9, գունավոր մետաղներինը՝ 73,2, լատունինը՝ 82,9 տոկոսով: ■

Պայթյուն Նախիջեւանի զինապահեստում

Նախիջեւանի մոտակայքում շաբաթ օրը ռուսական զորքերի զինապահեստներում տեղի են ունեցել պայթյուններ: Ըստ լուրերի, պատճառը կրակոցն է եղել: Ջոհվել են 4 հոգի՝ երկուսը զինծառայող, երկուսը քաղաքացիական: ■

«Դավիթ Անհաղթ» արտոնագրված հումանիտար համալսարանը

հայտարարում է 1992-1993 ուս. տարվա ընդունելություն

Համալսարանը հիմնադրվել է 1990 թ. եւ իր հենքից ներկայացնում է ազգային ու համամարդկային հոգեւոր արժեքներով կողմնորոշված նոր տիպի ուսումնական հաստատություն հետեւյալ մասնագիտություններով՝

1. Ժողովրդագիտության եւ լինգվաերկրագիտության Վ. Վ. Կարապետյանի անվան ֆակուլտետ.

ա) հայագիտություն (15 տեղ)
բ) անգլիագիտություն (15 տեղ)
գ) ամերիկագիտություն (15 տեղ) եւ
դ) կրոնագիտություն եւ փիլիսոփայություն (15 տեղ) բաժիններ:

2. Միջազգային հարաբերությունների (դիվանագիտության) ֆակուլտետ (25 տեղ).

ա) անգլիախոս երկրներ
բ) իսպանախոս երկրներ
գ) արաբական երկրներ
դ) Ֆրանկոֆոնիկ երկրներ:

3. Ստեղծագործական ֆակուլտետ

ա) հեռուստա-ռադիոլրագրություն (15 տեղ)
բ) հեռուստաեթիկորություն (10 տեղ):

Ուսման տեւողությունը հինգ տարի է, գիտնաբանության ենթականերին ուսման շրջանում հեռաձգում է տրամադրվում: Անհրաժեշտության դեպքում ուսումը կարելի է սահմանել անհատական ծրագրով եւ ժամկետներով:

Համալսարանում կարող են զուգահեռաբար սովորել մյուս բուհերի ուսանողները հումանիտար բնագավառի մասնագիտություն ձեռք բերելու նպատակով, ինչի համար անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք այն բուհից, որտեղ նրանք սովորում են:

Ուսման մեկ տարվա վարձը 10 հազար ռուբլի է (28 տոկոս հավելյալ արժեքը չհաշված), իսկ հեռուստաեթիկորական մասնագիտության համար՝ 15 հազար ռուբլի (28 տոկոս հավելյալ արժեքը չհաշված): Դրամական կուրսի էական փոփոխման դեպքում համալսարանն իրեն իրավունք է վերապահում փոխել ուսման վարձի չափը:

Ցանկացած հիմնարկ կամ կազմակերպություն պայմանագրային կարգով կարող է ուսուցման համար գործուղել դիմորդներ համալսարանի հաշվին փոխանցելով ուսման վարձը:

Ընդունելությունը կանցկացվի մրցույթային ընտրության կարգով: Մրցույթը անց է կացնում «ՍՈՖԻՈՄԵՏՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոնը դիմորդների մասնագիտական կողմնորոշման, մտաունակության եւ անձնական որակների որոշման միջազգային ստանդարտներին համապատասխանող տեստերի միջոցով: Բացի դրանից ամեն դիմորդ կարող է ստանալ անհատական հոգեբանա-մասնագիտական կոնսուլտացիա:

Ընդունելությանը մասնակցելու համար դիմորդները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը.

ա) դիմում համալսարանի տնօրենի անունով
բ) միջնակարգ եւ ավելի բարձր կրթության վկայական կամ դիպլոմ
գ) բուժտեղեկանք (88 ձեւ)
դ) 6 լուսանկար (3x4 չափի)
ե) ինքնությունը հաստատող փաստաթուղթ:

Փաստաթղթերի ծեւակերպման եւ ընդունելության մրցույթին մասնակցելու համար դիմորդը պետք է վճարի 350 ռուբլի, որը, անկախ ընդունելության արդյունքներից, չի վերադարձվում նրան:

Գործերն ընդունվում են ս/թ հուլիսի 15-ից ամեն օր՝ ժ. 11:00-17:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Ընդունելության տեստավորումը ս/թ օգոստոսի 15-ից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ընդունող հանձնաժողովին.

Երեւան, Հանրապետության հրապարակ, Միությունների տուն, 1-ին հարկ, ուսումնամեթոդական կենտրոն, 13 սենյակ: Հեռ. 52-05-90

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

digitised by A.R.A.R.@

Իտալահայ համայնքը խիստ տարբերվում է մյուս հայ գաղթօջախներից

Տարօրինակ հայ, բժիշկ, մոտոսիրահար Պիետրո Քուչուկյան



1984 թ., երբ Հայաստանում էի գտնվում, այն ժամանակվա «Ինտուրիստ»ի տնօրինությանը դիմեցի իմանալու Հայաստան այցելող օտարազգի զբոսաշրջիկների տոկոսային հարաբերությունները: Խ. Հայաստան այցելող արտասահմանցիների մեջ առաջին տեղն էին գրավում գերմանացիները, հետո իտալացիները:

Տարիներ շարունակ շփվելով իտալացիների հետ, նկատել եմ, որ նրանք իսկապես իրենց մոտ են զգում հայ ժողովրդի տոհմիկ մշակույթին ու արվեստին, սովորույթներին: Երկու ժողովուրդների միջև կարելի է գտնել բացասական եւ դրական ընդհանուր կետեր, չմոռանանք, որ վերջիվերջո երկուսն էլ հարավի ժողովուրդներ են: Մի խոսքով, իտալացիք հաճախ են գալիս Հայաստան ու հետաքրքրվում նրանով: Իսկ գալով այստեղի հայկական համայնքին, այն խիստ տարբերվում է մյուս հայ գաղթօջախներից: Այո, Իտալիայում չկան ԱՄՆ-ի, Լատինական Ամերիկայի կամ Ֆրանսիայի պես ոչ հայկական լոբբիստական կազմակերպություններ, ոչ հայկական սեփական Ֆուտբոլի մարզադաշտեր, որոնք հսկայական գումարներ են ուտում, ոչ փառահեղ հայկական դահլիճներ, ուր մեծաշուք ճաշկերույթներ ու պարահանդեսներ են կազմակերպվում ազգօգուտ նվիրատվություններ աղահովելու նպատակով, ոչ հայկական ռադիո եւ հեռուստաժամեր ու օրաթերթեր, ոչ էլ մեծ թվով հայկական եկեղեցիներ: Սրանցից ոչ մեկը չկա Իտալիայի հայկական տարբեր գաղթօջախներում (Միլանում 500, իսկ ամբողջ Իտալիայում ընդամենը 2000 հայեր են բնակվում):

Իտալիայում,- Հռոմ, Պարմա, Ֆլորենցիա, Միլան, Պադուա, անմոռանալի Սուրբ Ղազար,- հայերը զբաղվում են գիտությամբ, կրթությամբ, մշակույթով, պատմության հետազոտությամբ, հայերին լայն զանգվածների ծանոթացնելու գործով եւ բացի սրանից, իհարկե, առեւտրով:

Իտալիայի հայկական գաղութի սակավ, սակայն առանձնահատուկ անձնավորությունների, նրանց գործունեության մասին ժամանակ առ ժամանակ արտահայտվել են թե հայրենի, թե սփյուռքահայ թերթերում: Օրինակ, Միլանի «Սուրբ 40 մանկունք» հայաստանյայց հայ առաքելական եկեղեցու հովիվ Սարգսյանի, որը չունենալով ոչ վարորդ, ոչ օգնական, վազում է աջ ու ձախ, համակարգելով եւ երբեմն էլ նախաձեռնելով ազգօգուտ բազում գործեր:

Վերջերս «Ազգ»ում հաճախ ենք անդրադարձել մեկ այլ իտալահայի՝ Պիետրո Քուչուկյանին: Իտալիայի Տրենտո քաղաքում 1940 թ. ծնված այս ատամնաբույժը միեւնույն ժամանակ Իտալիայի մարզական լրագրողների միության եւ մոտոցիկլիստների Ֆեդերացիայի անդամ է, տարիներ շարունակ եղել է մոտոալպինիզմի ակտիվ մարզիկ, հետո մարզիչ, նոր տիպի մոտոցիկլների հեղինակ եւ վերջապես Իտալիայի եւ աշխարհի չեմպիոն (1981 թ.): Քուչուկյանը երկու անգամ Իտալիայից Հայաստան է եկել մոտոցիկլետով, ընկերացկությամբ իր տիկնոջ, փիլիսոփայության դասախոս տիկին Աննա-Մարիայի: Քուչուկյանը հայաստանյան ճամփորդությունների հուշերը հրատարակել է Իտալերեն՝ իտալացի ընթերցողներին ներկայացնելով Հայաստանը, հայերին, նրանց արժանիքներն ու ծիծաղելի կողմերը:

1988 թվականի աղետի ժամանակ շաս սփյուռքահայերի նման Քուչուկյանը եւս իր լուման է դրել աղետի գոտում, Ստեփանավան քաղաքում աշխատելով որպես բժիշկ-ատամնաբույժ, թարգմանիչ եւ կազմակերպիչ:

Մոտոցիկլիզմի եւ ատամնաբուժության այս հատուկ սերը կարծես միաձուլվել է, Քուչուկյանի ասելով, «Հայաստան» կոչեցյալ «հոբբի»ի հետ, մի զբաղմունք, որն, իհարկե, շաս է տարբերվում իր մինչեւ այսօր ունեցած զանազան «հոբբիներ»ից, քանի որ այս դեպքում նա զգում է, թե ինքը ինչպես վրա կարո՞ղ է արդյոք ազդել պատերազմական վիճակը, նա հաստատակամորեն ասաց. «Իմ կարծիքով չի ազդի, որովհետեւ մեր նախագահն ու արտգործնախարարը ի սկզբանե ճշմարիտ քաղաքականություն են տանում, հայտարարելով, որ հայերի եւ ադրբեջանցիների կոնֆլիկտը կրոնական չէ, այլ աշխարհագրական ու պատմական խնդիր»:

Իսկ հայ համայքն ինչպե՞ս է աղդում, շարունակեցի ես: *«Մեր վիճակը լավ է,* ասաց նա, *որեւէ խնդիր չունենք: Հայերն Իրանում հարգված են, լավ դիրք ունեն, օգտվում են կրոնական ազատությունից, պետական մի շարք արտոնություններից: Ու թեեւ հայերն այստեղ պետական շաս պաշտոններ չեն զբաղեցնում, բայց մասնավոր գործերի մեջ մեծ հաջողություններ են հասնում»:* Իսկ այն հարցին, թե որեւէ կապ կա՞ իրենց եւ Իրանում աղդող ադրբեջանցիների միջեւ, նա պատասխանեց. *«Մենք համագործակցում ենք: Օրինակ՝ Ջուլֆայի մեր գրասենյակի բոլոր պաշտոնյաներն ադրբեջանցիներ են»:*

Եւ իրոք, դա այդպես էր: Ջուլֆայում մեզ ընդունեցին, հյուրասիրեցին եւ ճանապարհեցին «Sati» ֆիրմայում աշխատող ադրբեջանցիները: Նրանց վարքագծում, համենայն դեպս, բացի հյուրասիրությունից, ոչ մի բենամանք չնկատեցի: Մի այլ խոշոր ընկերություն էլ կար, որի տնօրենի հետ հանդիպեցի Թեհրանում: *«Ռազան»* ճանապարհաշինական ընկերության նախագահ Լեւոն Բաղումյանը, որը նույնպես 40 տարի՝ շարունակ աշխատել է Իրանի ամենատարբեր քաղաքներում, իր ընկերության միջոցով կառուցել հարյուրավոր տներ, բարեկարգել ճանապարհներ, հիմա էլ նախաձեռնել է Էջմիածին-Մարգարա ճանապարհին «Գոլդ» համատեղ ընկերության միջոցով գերմանական սառնարան կառուցել, որին կից կլինի նաեւ առեւտրական հիմնարկություն: Սառնարանի ընդհանուր ծախսերը կկազմեն մոտ 30 մլն ռուբլի, այն կունենա 1300 տոննա տարողություն, իսկ շինարարությունը կտեւի 6 ամիս: Բացի դրանից, պրն. Բաղումյանը Երեւանի «Էլեկտրոն» գործարանի հետ որոշել է Մեղրիում պահեստային բազա կառուցել, որպեսզի բեռնափոխադրումների ժամանակ սահմանային քաղաքում պահեստավորման տեղ լինի: Մոտ 30 մլն ռուբլի կկազմի նաեւ պրն. Բաղումյանի մյուս նախագիծը, ըստ որի Հայաստանում կկառուցվի ակումուլյատորի գործարան: Ես հարցրեցի, թե ո՞րն է այդքան մեծ ներդրումների պատճառը, եւ որքանը պետք է մնա Հայաստանին, պրն. Բաղումյանը պատասխանեց, որ ստացված շահաբաժինը պետք է կիսվի կողմերի միջեւ 50-50 կամ 20-80 հարաբերությամբ: *«Ես շաս-շաս եմ կառուցել Իրանի համար, հիմա էլ որոշել եմ Հայաստանին օգնել, նրա համար աշխատել»,* ասաց նա:

Թեհրանում ունեցած այս երկու հանդիպումները բավական էին, որպեսզի ոչ միայն ընդունելի դառնա Իրանի հայ գործարար շրջանների որդեգրած դիրքորոշումը, այլեւ զգացվի նրանց կարողությունների ու հնարավորությունների սահմանները: Չէ՞ որ մոտ 200 հազար իրանահայերի շրջանում բավականին զգալի է շերտավորումը: Մեծ արդյունաբերողների կողքին կան նաեւ մանր արհեստավորներ, բժիշկներ, ինժեներներ, ուսուցիչներ, այլ կարգի ծառայողներ: Ճիշտ է, նրանց ընդհանուր մակարդակը եւ կենցաղի, եւ աղրելակերպի առումով ավելի բարձր է, քան շաս իրանցիներինը: Բացի այդ, խոշոր ձեռնարկատերերն ու առեւտրականները 1979 թվականի Իսլամական հեղափոխությունից հետո հեռացել են երկրից: Հայերից մեկն ասաց, թե այդ թիվը հնարավոր չէ ասել, բայց մոտավորապես այն հավասարվում է համայնքի մինչ այդ եղած ածի թվին:

Կյանքն, իհարկե, փոխվել է: Ինչպես բոլոր իրանցիները, հայերն էլ ենթարկվում են երկրի օրենքներին, հայ քրիստոնյա կանայք նույնպես հագնում են չադրա (թեեւ ավելի շաս գործածում են գլխաշոր), բայց հայկական համայնքի ներսում կազմակերպվող միջոցառումների ընթացքում աշխատում են երեվալ սովորական հանդերձանքով, իսկ համայնքային կյանքը հիմնականում անցնում է եկեղեցիներում, միություններում ու դպրոցներում:

(Շարունակությունը հաջորդիվ)

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Լիբանանյան հանդեսի հատուկ համարը նվիրված է Հայաստանին

Բեյրութում Ֆրանսերեն լույս տեսնող «Լա ռըվյու դյու Լիբան» շաբաթաթերթը հաճախ է տպագրում Հայաստանին եւ հայերին նվիրված նյութեր: Հանդեսը հիմնվել է 1928 թվականի Փարիզում: Այս տարվա հուլիսի 11-18-ի համարում կենտրոնական տեղ են զբաղեցնում նորանկախ Հայաստանի մասին պատմող նյութերն ու լուսանկարները: Նյութերի հեղինակը հանդեսի անխոնջ աշխատակցուհի տիկին Սոնյա Նիկոլյանն է, որն առատորեն պատկերազարդված 40 էջերերում պատմում է իր հայաստանյան տպավորությունների, մայիսի 28-ի տոնակատարության, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի, արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի, պատգամավոր այլ անձանց հետ իր ունեցած հանդիպումների, առօրյա կյանքի դժվարությունների մասին, համառոտակի ներկայացնում Հայաստանի պատմությունը, Էջմիածինը, Երեւանը, աղետյալ գոտին, Արցախի հարցը, իր բացառիկ հարցազրույցներն Ամենայն հայոց հայրապետի, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, Երեւանում աղդող արտասահմանցի, այդ թվում լիբանանցի ուսանողների կյանքը եւ այլն: Էջեր են նվիրված արտասահմանի մարդասիրական, մասնավորապես բուժական օգնությանը, մշակութային կյանքին, տպագրված է հայտնի գեղանկարիչ Հակոբ Հակոբյանի «Մայր Հայաստան» նկարը:

Ասենք նաեւ, որ հանդեսի այս համարում շաս լիբանանահայեր զետեղել են իրենց գովազդները: Օրինակ, գովազդներ կան օգոստոսի 8-ին Լիբանանում սկսվող Շառլ Ազնավուրի համերգների, Ռեմոն Գեւորգյանի եւ Պոլ Փարուժյանի նոր գրքի («Հայերը օսմանյան կայսրությունում Մեծ եղեռնի նախօրեին», «Արիա», 608 էջ), հայտնի ատամնաբույժ Մանուկ Ասլանյանի վերաբերյալ եւ այլն:

ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆ

Ակամա «վաճառականներ» կամ ընբռնումն իբրեւ հավերժական հասկացություն

Ժամանակի ծանրաչափը համբերությամբ արձանագրում է կյանքի անհամաչափ տատանումները եւ արդյունքների մասին խորհելու, դրանք վերլուծելու ծանր պարտականությունը դնում մարդկանց վրա: Վերջիններիս աղրելակերպն ու կենսագործունեությունն իրենց պատասխանն է այդ տատանումներին, նրանց սոցիալական վիճակը՝ այդ տատանումների արդյունավետության չափանիշը:

Հանրապետությունում լայն թափ ստացած առեւտրական խառնիխուռն հոսքի մեջ, ուր զանազան խանութներ ու կրպակներ կրում են առաջնության դափնին, իսկ իրարից մայթերը խլխլող առեւտրականները վիճարկում են առաջատարի կոչումը, «Այրարատ» կինոթատրոնի հարեւանությամբ գտնվող զբոսայգում ընթացող «առեւտուրն» աննկատ է մնացել կարծես: Միայն այգում զբոսնողներն են ականատես դրան ու մեկ էլ այս կամ այն կերպ դրա գոյության մասին տեղեկացածները:

Այդ «վաճառքի» «մասնակից» մարդիկ չունեն «սեղանավարների» ու հյութավաճառների ինքնագոհությունն ու ինքնավստահությունը, նրանց վաճառատեղերն ու աղրանքների տեսականին չունեն «Առեւտրի տաճարների» շքեղությունը եւ փայլը: Բայց եւ այնպես, նրանք պետք է ուշադրություն գրավեն:

Հին շոր, մաշված կոշիկներ զանազան օգտագործված առարկաներ, ահա այն աղրանքների մոտավոր ցանկը, որ երեխայի ամոթխածությամբ, կարծես իրենց տաճից ամաչելով, անցնող-դարձողին են «ներկայացնում» մի խումբ տարիքն առած մարդիկ, թոշակառուներ: Իսկապես, կարիքը մարդկանց ստիպում է այնպիսի քայլեր անել, որոնց մասին նրանք մտքներով էլ չէին անցկացնի: Օրեցօր փոփոխվող տնտեսական ու քաղաքական տանից կախված՝ նաեւ մարդկային հարաբերություններն այդ մարդկանց ստիպել են մտնել «առեւտրի ոլորտ»: Վաճառվո՞ւմ է արդյոք «աղրանքը», եւ այդ վաճառքից գոյացած գումարը ինչի՞ն է բավականացնում: Այս հարցերի պատասխան կարող են լինել շուկայում եւ խանութներում վաճառասեղաններին նեստած երկչոտ հայացքներն ու մի հացի գին հաշվող մատների անհույս ու վախվորած շարժումները...

Հին, մաշված, երբեմն իրենց իսկ անհրաժեշտ առարկաների այդ տարօրինակ առուծախը հաճախ է միմյանց հանդիպեցնում նույն ճակատագրի տեր մարդկանց: Եւ նրանց միջեւ ընթացող առեւտուրը մի անգամ եւս հիշեցնում է, թե ինչի են հասցնում շուկայական կոչված հարաբերություններից ծնունդ առած զանազան շուկայավայել հարաբերությունները:

Այս մարդկանց հայացքն ու տեսքն ինքնին պատկերացում են տալիս նրանց մասին: Եւ որքան էլ վերին աստիճաններում տեղավորված անձինք փորձեն իրենց բացատրություններն ու բացահայտումները ներկայացնել հանրությանը, վերոհիշյալ «տոնավաճառը» մեզ է ցուցադրում մի պատկեր նրանց կյանքից, ում աղուսի միակ միջոցը կենսաթոշակն է: Իսկ եթե դրան ավելացնենք նաեւ այն, որ թոշակառուների որոշ մասն աղքեն 2 ամիս թոշակ չի ստացել, ապա պատկերն ավելի պարզ կդառնա:

Չփորձենք մեղադրել նրանց հարազատներին, որովհետեւ «Տղաս հազիվ է իր համար մի շալվար առնում, իր ընտանիքը պահում, ինձ ինչպե՞ս է օգնելու»: Սա կյանքի ընթացքի նրանց արձանագրությունն է, որ բնորոշ է շաս-շատերին:

Հասարակության սոցիալական ապահովվածությունն իշխանության հիմքերի կայունության կարեւոր գրավականն է: Եւ որքանով ապահովված է հասարակությունը, այդքանով ապահովված է իշխանության հետագա գոյատեւման հնարավորությունը: Ինչքան էլ մեր իշխանությունները վստահ լինեն իրենց հենարանների ամրությանը, հասարակության ներկա սոցիալական դրությունը բնավ էլ նրանց քայլերի հաստատունության երաշխիքը չէ: Ճիշտ է, թեեւ «ընբռնումով մոտենալը» հավերժական արտահայտություն է; բայց հավերժական գործողություն չէ: Թերեւս ընբռնենք սա:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Քաղաքական դիտորդի անկյուն

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ». ԱՎԵԼՈՐԴ ԲԵՌ ԹԵ՞ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇ

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան-Միջին Արևելք» վերլուծական կենտրոն

«Հայկական հարցն» իր մեջ ընդգրկում է երեք հավասարազոր բաղադրամաս: Առաջին, լիարժեք պետականության կառուցման խնդիրը, երկրորդ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության ճակատագիրը, երրորդ, պատմական անցյալից ժառանգած հիմնահարցերը՝ հայկական ցեղասպանության միջազգային դատապարտումն ու պատմական հայրենիքի տարածքների պահանջատիրությունը: Հաշվի առնելով հայ ազգային-քաղաքական միտքը ներկայացնող ուժերի պատրաստվածության և կարողությունների ներկայիս աստիճանը, կարելի է կանխատեսել, որ նրանցից յուրաքանչյուրն իշխանության անցնելուց հետո, հնազանդվելով օբյեկտիվ իրողությունների թելադրանքին, առաջնայնությունը տալու է առաջինին, կենտրոնանալու է երկրորդի լարված քաղաքի մեջ, իսկ երրորդը բոլոր հնարավոր միջոցներով մղելու է «երկար դարակի» հեռավոր անկյունը: Պատճառը մեկն է՝ մեր մտածելակերպն ու հոգեբանությունը պատրաստ չեն ընկալելու այս երեքի անկապտելիությունը, մանավանդ, որ նրանք նույնիսկ առանձին-առանձին վերցրած գրեթե անհաղթահարելի են դարձել: Ըստ այդմ, ամեն անգամ փորձ է արվելու վերաբաշխել այս խնդիրները միմյանց միջև, առդյունքում սկզբունքորեն հանգելով երեք անհայտով անլուծելի հավասարման:

Եթե մի կողմ թողնենք զգացմունքայնությունն ու պատվախնդրությունը, ապա նման իրավիճակից դուրս գալու երկու ելք կա՝ կամ երեքից մեկին բացարձակ առաջնայնություն տալ և բոլոր ուժերը կենտրոնացնել այդ ուղղությամբ, կամ գրաստել այն բանաձևը, որ առանց միմյանց բացառելու կտեղավորվեն երեքը միաժամանակ: Մեծ վերապատումներով, իհարկե, կարելի է ասել, որ Հայաստանի ներկա իշխանությունը ընտրեց առաջին ճանապարհը և առ այսօր ջանում է առավելագույնս պաշտպանել պետականությունը մյուս երկուսի անհաղթահարելի ազդեցությունից: Այս փորձը տաղտալվեց երկու պատճառով. նախ՝ վարչակարգը չկարողացավ անհրաժեշտ հիմնավորումներ և իրական քաղաքական ծրագիր ներկայացնել ազգային խնդիրներում նման ընտրություն կատարելու նպատակահարմարության հարցում և, որ չափազանց կարևոր է, պատշաճ օրակարգից հանելով պատմական անցյալի խնդիրները և միջազգային հանրության երկրներում առավելագույն մեղմություն դրսևորելով ԼՂՀ-ի խնդրում, այնուամենայնիվ, չստեղծեց պետականության քաղաքական անվտանգության կայուն երաշխիքներ, որոնք ծանրակշիռ գործոն կլինեին նման դիրքորոշումը պաշտպանելու գործում: Ամեն դեպքում սա սուբյեկտիվ գործոն է, և եթե նույնիսկ վարչակարգն անթերի լիներ պետականության քաղաքական ապահովության խնդրում, միևնույն է, առաջին պլան էր դուրս գալու երկրորդ պատճառը, որն արդեն օբյեկտիվ է և պարզունակ մոտեցումով հաղթահարել հնարավոր չէ:

Թեև զանգվածային գիտակցության մեջ արմատավորվել է հոխորտ դիմակայության վտանգավոր և անհեռանկարային լինելը, թեև ժողովրդի գերակշռող մեծամասնությունը դեմ է դիմակայության նման ընթացքին, առավել ևս նրա վերածմանը լայնածավալ պատերազմի, սակայն դա չի նշանակում, որ այդ նույն ժողովուրդը համակերպվելու է այն գաղափարի հետ, որ իր ազգային խնդիրներն անլուծելի են, որ ԼՂՀ-ի դատը կարելի է տանուլ տալ, իսկ պետականությունը բավարարվելու է երրորդ ափսարհի անդեմ երկրի կարգավիճակով:

Օբյեկտիվ հնարավորությունների և ժողովրդական իղձերի անհամատեղելիությունը Հայաստանը վերածում է հավերժական լարվածության կենտրոնի, որի պարբերական դրսևորումները տաղտալելու են վարչակարգերը և քաղաքական կառուցիներն բարձրացնելու կոստակցությունները ու նրանց ղեկավարներին: Պետք է մեծ ուշադրությամբ վերաբերել սոցիոլոգների այն նախազգուշացումներին, որ ԼՂՀ-ի խնդրի հայանպաստ լուծումը Հայաստանի բնակչության համար ավելին է, քան պարզապես ռազմաքաղաքական հաղթանակը: Դա նորաստեղծ պետականության գոյության առանցքն է, որնաբարը մի մարմնի, որն ամեն ոտքն կարող է անդառնալիորեն անդամահատվել: Այսօր պետականության խնդիրն ու ԼՂՀ-ն այն եզրագիծն են, որը չհաստատելու դեպքում հայ ժողովուրդը դատապարտված է հավերժ մնալու պատմության ստվերային կողմում:

Ուստի, մենք հավատարիմ ենք մնում այն համոզմունքին, որ հայ ազգային-քաղաքական միտքը պարտավոր է առաջնորդվել այն բանաձևով, որ հնարավոր կլինի առավելագույնս ներդաշնակել երեք հիմնահարցերը միաժամանակ: Ընդ որում, պետք է հստակ գիտակցել և պատասխանատու վերաբերմունք ցուցաբերել հայ ժողովրդի քաղաքական ապագայի նկատմամբ, հաշվի առնելով նրա ներկա վիճակի բոլոր նրբերանգները: Նախ, հայ ժողովուրդը տրանսպարտային կենցաղ ունի և առաջիկայում նրա կենտրոնացումը Հայաստանում հնարավոր չէ: Սա նշանակում է, որ քաղաքական բանաձևը պետք է հաշվարկված լինի ոչ միայն Հայաստանի ու ԼՂՀ-ի, այլև Արևմուտքում, Միջին Արևելքում և նախկին ԽՍՀՄ տարածքում ապրող հայ ժողովրդի սվար հատվածների ազգային անվտանգության և բնականոն զարգացման ապահովման տեսանկյունից: «Հայկական հարցի» շահարկումը նրանց միջև փոխադարձ դիմակայության ընթացքում վտանգում է մեր հայրենակիցների կյանքի և գույքի անվտանգությունը: Կտրուկ գործողությունների կամ երջադարձերի դեպքում հայ ժողովուրդը, մի կողմից, դիտարկվելու է իբրև հակառեմյան ուղղվածության «ահաբեկչական դաշինքի» երկրների դաշնակից, մյուս կողմից, երջանում Արևմուտքի կամակատար, որի քաղաքականությունն ուղղված է ընդդեմ Հյուսիսի կամ Արևելքի:

Երկրորդ, պետք է առաջնային տեղ հատկացնել տնտեսական գործոնին, ինչպես Հայաստանի, այնպես էլ սփյուռքի ժողովրդի առաջընթաց զարգացման և բնականոն կենսագործունեության գործում: Այս խնդիրները չհաղթահարելու դեպքում Հայաստանի ցանկացած վարչակարգ զոհ կգնա ազգայնական երանգավորում ստացող սոցիալական անբավարարվածությանը: Նույնը մեսական հիմք է ծառայելու այն ուժերի համար, որոնք ձգտելու են հերթական անգամ տարալուծելու հայկական պետականությունը, սոցիալական նվազագույնն ապահովելու ընդունակ զորեղ հարեւանների գերիշխանության ներքո: Տնտեսական խնդրի լուծումը պետք է արմատապես տարանջատի սոցիալական խնդիրը քաղաքական և ազգային խնդիրներից, նրանց տրամադրելով կոռապատված, ամենօրյա զանգվածային ճնշումից ազատ, ինքնուրույն ու նպատակային հանգուցալուծման լայն ասպարեզ: Ուստի, բանաձևով նախատեսված քաղաքական ծրագիրը պետք է առավելագույս ծառայի տնտեսական հարցերի հանգուցալուծմանը: Ապագայում Հայաստանն այլընտրանք չունի, քան տնտեսականացված քաղաքականությունը:

Երրորդ, քաղաքական ափսարհագրության մեթոդիկայով նախնական ուսումնասիրություններն իսկ վկայում են, որ նույնիսկ հայ-ադրբեջանական հակամարտության բացակայության դեպքում Հայաստանի տարածքային ամբողջականության սպառնալիքն ակնհայտ էր երկու հատվածում՝ Սեւանի ավազանում և Զանգեզուրում: Այս սպառնալիքն պմրացված է ափսարհաքաղաքական, տնտեսական և գոյատևողական գործընթացների զարգացման հիմնական միտումներով և այն կանխարգելելու համար պետք է նախածեռնել նպատակային, կոնկրետ գործողություններ:

Չորրորդ, Հայաստանը ափսարհագրական, դրանով իսկ հաղորդակցական փակուղու մեջ է, և սա հնարավոր ազդեցիկ լծակ է հարեւան երկրների ձեռքին նրա վրա պարբերական ճնշում գործադրելու համար, ինչը, բնականաբար, խիստ սահմանափակելու է պետականության ինքնիշխանությունը:

Հաշվի առնելով վերը նշվածը և մի շարք այլ գործոններ, խորին համոզվածություն ունենալով, որ ո՛չ այժմ, ո՛չ էլ առաջիկայում Հայաստանն ի վիճակի չի լինելու սոսկ ուժային մեթոդներով կանխելու հնարավոր սպառնալիքները և լուծելու ծառացած խնդիրները, որ սովորական եղանակներով հանրապետության տնտեսությունը չի կարողանալու ապահովել բնակչության տնտեսական բարգավաճումը, արգելակելու հասարակության հոգեբարոյական անկումն ու բազմակողմանի ճգնաժամը, գիտատեխնիկական եւ հումանիտար մտքի արագընթաց զարգացումը, եւ Հայաստանը դուրս է մնալու համաշխարհային քաղաքակրթության երջանակներից, պատշաճում ենք այն բանաձևը, որի հիմքում ընկած են Միջինարեւելյան ընդհանուր տան ձեւավորման ուղղությամբ Հայաստանի նախաձեռնությունը եւ նրա կողմից առաջադրվելիք քաղաքական սկզբունքների համակարգը: Այս բանաձևը անտեսվեց, երբ մեկ տարի առաջ մենք կանխատեսում էինք արաբ-իսրայելական հարաբերությունների խաղաղ կարգավորման առանցքով միջինարեւելյան գործընթացի անխուսափելիությունը եւ կոչ էինք անում համակարգված ձեւով ընդգրկել «Հայկական հարցը» այդ ընթացքի մեջ: Դա կբացառեր երջանում բարքական գործոնի ձեւավորման նման տարբերակը, Լեռնային Ղարաբաղում պատերազմական լարվածության ներկայիս աստիճանը եւ կկանխեր միջազգային հանրության երջանակներում «Հայկական հարցի» անհնախատեղ վարկաբեկումը: Հայաստանը չէր հայտնվի տնտեսական քայքայվածության նման վիճակում, իսկ ազգային-քաղաքական միտքը ստիպված չէր լինի մոռացության մատնով պատելով պատմական անցյալի խնդիրները՝ երկխոսություն բացել ԼՂՀ-ի եւ պետականության խնդիրների անհամատեղելիությունը ճանաչելու կամ հերքելու մասին: Եւ վերջապես, «Հայկական հարցը» չէր վերածվի մեծ քաղաքականության սպառազինական հակասությունների բախման բաստարանի, այլ ամբողջ մեկ տարի աշխատանք կպահանջեր բանակցային կողմերի բանները մեզ վրա հաստելու ուղղությամբ: Ընդ որում, մեզ համար էականը ոչ թե արաբ-իսրայելական կնճռոտ խնդրի վերջնական հանգուցալուծումն է, այլ այդ առանցքի բարջ տարածքային նոր կառույցների ձեւավորման հնարավորությունը, որի երջանակներում էլ պետք է ձգտել լուծում տալ «Հայկական հարցին»:

Միջազգային հանրությունն ու մեծ տերությունները ընդգծված բաղադրվածություն ունեն միջինարեւելյան գործընթացի նկատմամբ եւ մեր խնդիրն է հնարավորին չափ արագ դուրս գալ Արեւմուտք-Իրան-Ռուսաստան ուժային հակամարտության ճակատից եւ ընդգրկվել այն գործընթացի մեջ, որ գերակայում են քաղաքական մոտեցումներն ու խաղաղ կարգավորման բանակցությունները: Սա նաեւ միակ հնարավորությունն է դուրս բերել «Հայկական հարցը» ԵԱՀԽ-ի եւ ԱՊՀ կառույցների տնօրինությունից, որոնց քաղաքական սկզբունքներն ու գործնական մոտեցումները արմատապես հակասում են «Հայկական հարցին»: Անհրաժեշտ քաղաքական ակտիվության եւ մտավոր կարողությունների ցուցաբերման դեպքում մենք հնարավորություն կունենանք անմիջականորեն մասնակցելու նոր տարածքային կառույցի ստեղծմանը, որի հիմնարար սկզբունքները անխուսափելիորեն տարբերվելու են զուտ արեւմտյան հիմքի վրա ստեղծված կառույցների սկզբունքներից: Այսինքն, Հայաստանը եւս կկարողանա առաջադրել համապատասխան սկզբունքներ, որոնք կծառայեն «Հայկական հարցի» հանգուցալուծմանը: Այս քաղաքականությունը կոչված է նաեւ Հայաստանի համար պայմաններ ստեղծել՝ արդյունավետորեն օգտվելու Միջին Արեւելքի հարուստ կարողություններից:

Վերջ ի վերջո, պետք է հասկանալ, որ խոսքը չի գնում Արեւմուտքին կամ Ռուսաստանին քաղաքականապես հակադրվելու մասին: Ընդհակառակը, մեր խնդիրն է առաջադրել Միջին Արեւելքում նոր իրողությունների ձեւավորման այնպիսի տարբերակ, որը նրանց երկուսի համար գերադասելի կլինի ներկայիս խիստ անկանխատեսելի քաղաքականությանը: Նման ծրագիրն այսօր իրականացնել շատ ավելի դժվար է, քան մեկ տարի առաջ: Հայ ժողովուրդը կորցրել է մի շարք բարենպաստ գործոններ միջազգային հանրության հայանպաստ հասարակական կարծիքից, մինչեւ ԼՂՀ-ի խնդրի դիտարկումն իբրեւ առաջադիմական, հակահամայնավարական դայրար: Այսօր մենք ստիպված ենք լինելու քաղաքական ակտիվությունը զուգորդել կարծր ռազմական դիմակայության հետ ԼՂՀ-ում: Գերլարում պահանջող ջանքեր են պետք, որպեսզի կրկին բեկում մտցվի օրեցօր թաքի առնող քաղաքական բախանիվի աշխատանքի մեջ, որն ուղղված է «Հայկական հարցի» դեմ: Բայց այդ ամենը լուծելի խնդիրներ են, եթե կա նպատակամղված, գիտակից աշխատանք: Առավել դժվար է կրտրել իշխանության լծակները տնօրինող այն նեղ երջանակի համառությունը, որը նախանձելի հավատարմություն ցուցաբերելով օտարների կողմից առաջադրված քաղաքական սցենարին, խափանում է իրադրությունը էսկալացիայի ենթարկելու ցանկացած փորձ: Իսկ դա արդեն արդեն ընդդիմության եւ ժողովրդի հաղթահարելիք խնդիրն է: ■

Աբխազիան ինքնիշխան, Վրաստանը դեմ

Աբխազիայի խորհրդարանը հուլիսի 23-ին իր տարածքում չեղյալ համարեց Աբխազական ԻԽՍՀ 1978 թվականի սահմանադրությունը: Մինչեւ նոր սահմանադրության ընդունումը Աբխազիայում կգործի 1925 թ. սահմանադրությունը: Այդ փաստաթղթի համաձայն, «Հանրապետությունն ինքնիշխան պետություն է, որն ինքնուրույն է, այլ իշխանություններից անկախ»: Առայժմ անհասկանալի է, թե Աբխազիան դո՞ւրս է գալիս Վրաստանի կազմից:

Ինչպես պարզաբանեցին աբխազական խորհրդարանի ամսուլի կենտրոնում, Աբխազիայի եւ Վրաստանի միջեւ հարաբերությունները «կկառուցվեն իրավահավասար միջպետական պայմանագրերի հիման վրա»: Բայց Աբխազիան «իր լիազորությունների մի մասը կարող է զիջել Վրաստանին»:

Աբխազիան իր 1978 թ. սահմանադրությունը չեղյալ է հայտարարել «Վրաստանի եւ Աբխազիայի միջեւ միջպետական փոխհարաբերություններում իրավական կարգավորման անորոշության հաղթահարման» նպատակով, քանի որ նույն թվականի վրացական սահմանադրությունը, որի հիման վրա ստեղծվել էր աբխազականը, չեղյալ է հայտարարվել դեռեւս 1989 թվականին: Խորհրդարանը հանրապետությունը վերանվանեց Աբխազիայի Հանրապետություն: Պատգամավորները հաստատեցին նաեւ հանրապետության նոր զինանշանը եւ դրոշը: «Աբխազական պետականությունը երաշխավորում է իր տարածքում ապրող բոլոր ժողովուրդների հավասար իրավունքները եւ պաշտպանում իր ժողովրդի շահերը մյուս պետությունների հետ հարաբերություններում», Սուխումիում կայացած ամսուլի առուլիսում հայտարարեց Աբխազիայի խորհրդարանի նախագահ Վլադիսլավ Ճիգինբա:

Մյուս կողմից, Աբխազիայի խորհրդարանի «ժողովրդավարական Աբխազիա» խմբակցությունը, որը ներկայացնում է հանրապետության վրաց բնակչությունը, անօրինական համարեց այդ որոշումները եւ զգուշացրեց, թե դա սեղ կխորի աբխազ եւ վրաց բնակչության միջեւ: Խմբակցության անունից հուլիսի 24-ին Աբխազիայի խորհրդարանի նախագահի տեղակալ Թամազ Նադարեշվիլին հայտարարեց, թե վրացի բնակչությունն ստիպված կլինի ստեղծել իշխանության զուգահեռ կառույցներ, որոնք կենթարկվեն Պետխորհրդին:

Ինչպես եւ պետք էր սպասել, Վրաստանի Պետխորհրդի նախագահ Եդուարդ Շեւարդնաձեն անօրինական համարեց Աբխազիայի խորհրդարանի որոշումները, որոնք ընդունվել են վրացի պատգամավորների բացակայությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Շեւարդնաձեն դադարեցրեց իր շրջագայությունը արեւմտյան Վրաստանում եւ վերադարձավ Թբիլիսի, որ շաբաթ օրը Պետխորհրդի նիստը ճնշարկեց «աբխազական հարցը» եւ չեղյալ հայտարարեց աբխազական խորհրդարանի որոշումը, պատճառաբանելով, թե 1925 թ. սահմանադրությունը լոկ նախագիծ է եղել:

Ավելացնենք, որ Աբխազիայի բնակչության 46 տոկոսը կազմում են վրացիները, 20 տոկոսը՝ աբխազները, մեծ թիվ են կազմում ռուսները, հայերը, ուկրաինացիները: Այսինքն, աբխազները ազգային փոքրամասնություն են իրենց հանրապետությունում: Փոքրամասնություն են նաեւ խորհրդարանում, որ 65 պատգամավորներից 30-ը վրացիներ են (որոնք քվեարկությանը չեն մասնակցել), 35-ը՝ այլ ժողովուրդների ներկայացուցիչներ: Վրացի պատգամավորներն իրենց չմասնակցությամբ ծանր դրության մեջ են դրել Պետխորհրդին, քանզի հակառակ դեպքում որոշումները պարզապես չէին անցնի:

Մյուս կողմից, Ռուսաստանի աջակցությունը եւ մահմեդական շրջանի օգնությունը 20 տոկոս աբխազներին կդարձնեն քայքայիչ մեծ ուժ: Ասկա է փոքր կայարության տարանջատումը, որը, արտաքին ուժի բիրտ միջամտությամբ հանդերձ, օրինաչափ երեւույթ է եւ շատ շուտով կհասնի նաեւ Ռուսաստանին եւ ԱՊՀ մյուս կայարություն-հանրապետություններին: ■

digitised by A.R.A.R.@

Քրքրելով գիտական հետազոտությունները

Նոր ուսումնասիրություն Թուրքիայի մասին

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական եւ տնտեսական դասերը

Վերջերս Դեսինում (Լիոն) հայկական ուսումնասիրության, վավերագրության եւ տեղեկատվության կենտրոնը լույս ընծայեց իր երկրորդ *«Թուրքիա. սոցիալ-քաղաքական, տնտեսական եւ ռազմական ուսումնասիրություն, 1985–1991 թթ.»* տեղեկագիրը:

Կենտրոնի առաջին ուսումնասիրություն-տեղեկագիրը ընդգրկում էր Թուրքիայի 1980–85 թթ. ժամանակաշրջանը: Երկրորդ տեղեկագրի հեղինակներն են Նախիր Ադամիկյանը, Քրիստին Շեարեն, Ստեփան Կյուրեղյանը, Ժան-Նոել Գուլումջյանը եւ ԲաՀՖի Գրիգորյանը: Տեղեկագրի ընդհանուր խմբագիրն է Ժյուլ Մարտունյանը: Աշխատությունը ընդգրկում է բոլոր այն կարեւոր հարցերը եւ իրադարձությունները, որոնք առնչվում են Թուրքիայի տնտեսական վիճակին, ներքին քաղաքական իրադրությանը եւ արտաքին քաղաքականությանը: Չնայած կենտրոնի փոքրաթիվ կազմին, նրան հաջողվել է բարձրակարգ, հասկանալի Ֆրանսիական աղբյուրների օգտագործմամբ դուրսբերել մի աշխատություն, որն արժեքավոր է ինչպես գիտական, այնպես էլ առօրյա նշանակությամբ: Տեղեկագրում բացի Թուրքիայում տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությունից, փորձ է արվում տալ նաեւ նրա ներքին եւ արտաքին քաղաքականության հետագա զարգացման ուղիները:

Բնակչության «կազմը»

Տեղեկագիրը սկսվում է Թուրքիայի ազգաբնակչության քանակի, ազգային կազմի եւ ժողովրդագրության զարգացման մասին տվյալներով: Թուրքիայում ավանդաբար մարդահամարը տեղի է ունենում հինգ տարին մեկ անգամ աշնանը: Դա 1985 թ. մարդահամարի տվյալների, Թուրքիայի ազգաբնակչությունը կազմում էր 51,1 մլն մարդ, իսկ 1990 թ.՝ 54 մլն: Եթե 1985 թ. ազգաբնակչության աճը 1980 թ. համեմատությամբ կազմում էր 2,8, ապա 1990 թ. այն կազմեց 2,2 տոկոս 1985 թ. համեմատությամբ: Այսպիսով, ազգաբնակչության աճի մասին տվյալները հերքում են թուրքական աղբյուրների պնդումներն այն մասին, թե Թուրքիան ունի 3 տոկոսից ավելի բնական աճ: Այս տեսակետից հետաքրքիր են կենտրոնի մասնագետների հետեւյալ հաշվարկները. 1950 թ. Թուրքիան ուներ մոտ 21 մլն բնակչություն կամ Եւրոպայում գրավում էր 4-րդ տեղը Իտալիայից, Ֆրանսիայից, Իսպանիայից հետո, գերազանցելով Պորտուգալիային եւ Հունաստանին: 1980 թ. իր 45,2 մլն ազգաբնակչությամբ նա արդեն առաջ էր անցել Իսպանիայից, բայց դեռ հետ էր մնում Իտալիայից եւ Ֆրանսիայից: Ինչ վերաբերում է Թուրքիայի ազգաբնակչության աճի հաշվարկներին, ապա նախատեսվում է, որ մինչեւ 20-րդ դարի վերջը, չնայած ազգաբնակչության աճի ցածր թվերին՝ 1,5–1,6 տոկոս, նա կունենա մոտ 70 մլն բնակչություն կամ կգրավի առաջին տեղը վերոհիշյալ պետությունների շարքում, առաջ անցնելով Ֆրանսիայից եւ Իտալիայից: Թուրքիայի ազգաբնակչությունը 2025 թ. կազմելու է մոտ 100 մլն կամ Ֆրանսիայի ու Իտալիայի ազգաբնակչության մոտ 90 տոկոսը: Այսպիսով, կենտրոնի մասնագետների եզրակացությունը հետեւյալն է. ապագայում Թուրքիան կդառնա առավել քան ազգաբնակչություն ունեցող երկիրը Մերձավոր Արեւելքում եւ Եւրոպայում:

Ներքին քաղաքական կյանք

Այնուհետեւ ուսումնասիրված է Թուրքիայի ներքին քաղաքական իրավիճակը: 1987 թ. նոյեմբերի մեջ-լիսի ընտրությունները նորից մեծամասնություն ապահովեցին արդեն կառավարող «Մայր հայրենիք» կուսակցությանը (292 պատգամավորական աթոռ): Այդ նույն թվականի սեպտեմբերին զինվորականների կողմից արգելված կուսակցությունների պարագլուխները հնարավորություն ստացան նորից զբաղվելու քաղաքական գործունեությամբ, գլխավորել փաստորեն իրենց կողմից ղեկավարվող կուսակցությունները՝ Սուլեյման Դեմիրել (Ճշմարիտ ուղի), Նեջմեթթին Էրբաքան (Բարգավաճում), Բյուլենթ Էջեվիթ (Դեմոկրատական ձախ) եւ Արփարսլան Թյուրքեշ (Ազգայնական ձախ): 1989 թ. մարտի քաղաքաղեսական ընտրություններում «Մայր հայրենիք» կուսակցությունն արդեն պարտություն է կրում: 1989 թ. հոկտեմբերի վերջին լրացավ հանրապետության նախագահ Էվրենի ժամկետը եւ մեջլիսը երրորդ ընտրափուլում նոր նախագահ ընտրեց Օզալին, որի կուսակցությունը մեծամասնություն ուներ մեջլիսում: Բայց սա խոսում է այն մասին, որ եթե նախագահի ընտրությունները տեղի ունեցան ազգային համաժողովրդական ընտրությունների միջոցով, ապա Օզալը հազիվ թե նախագահ ընտրվեր: Առաջ անցնելով ասենք, որ այդ մասին է վկայում նաեւ Օզալի կուսակցության պարտությունը 1991 թ. հոկտեմբերի մեջլիսի ընտրություններում, որոնք շահեցին գլխավորապես Ճշմարիտ ուղի եւ սոցիալ-ժողովրդական կուսակցությունները, այնինչ նրանք կազմելով կառավարություն՝ Դեմիրել (վարչապետ), Էրդալ Ինյոնյու (փոխվարչապետ եւ պետական նախարար): Օզալի կուսակցության հեղինակությունը շարունակում է ընկնել, ինչը երեւաց նաեւ 1992 թ. հունիսի քաղաքաղեսական ընտրությունների ընթացքում, հատկապես մեծ քաղաքներում՝ Ստամբուլ, Անկարա, Իզմիր, մոտ 14 մլն ազգաբնակչությամբ:

Տեղեկագրում խոսվում է նաեւ ներկուսակցական եւ միջկուսակցական պայքարի մանրամասների մասին, ասվում, որ ձախ կուսակցությունների արգելումը որոշակի կերպով հանգեցրել է իսլամական արմատականության ուժեղացմանը այն աստիճանի, որ թուրքական հանրապետության պատմության մեջ առաջին անգամ բանակը իրեն հայտարարել է «Իսլամի բանակ»:

Հատուկ ուսումնասիրված է քաղաքական կուսակցությունների եւ մահմեդական աղանդների փոխհարաբերությունների հարցը: Աղանդները նշանակալի դեր ունեին Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական կյանքում, քանի որ իսլամն այստեղ պետական կրոն էր, իր բոլոր հետեւանքներով: Թուրքիայում հանրապետություն հռչակելուց հետո (1923 թ.) իսլամը զրկվեց պետական կրոնի կարգավիճակից եւ այն հայտարարվեց պաշտոնական կրոն, եւ հոգաս ուղղափառ իսլամի այստեղ արգելվեցին աղանդները, որոնք սկսեցին ենթարկվել հետապնդումների: Բայց 2-րդ աշխարհամարտից հետո աղանդները հնարավորություն ստացան վերսկսելու իրենց գործունեությունը եւ թուրքական կուսակցությունները փաստորեն սանում էին այս կամ այն աղանդի աջակցությունը: Ըստ թուրքական «Նոմտա» հանդեսի տվյալների (1 մարտի, 1987 թ.), որոնք մեջբերված են տեղեկագրում, 1987 թ. մեջլիսի ընտրություններում «Մայր հայրենիք» կուսակցությունը օգտվել է Նաքշբենդի, Սուլեյմանջի, Իսիսջի եւ Նուրջի (մեկ բեռը), Բարորությանը՝ Կադիրի եւ Ճշմարիտ ուղին՝ Նուրջի (մյուս բեռը) աղանդների աջակցությունից: Որ «Մայր հայրենիք» կուսակցությունն օգտվում է Նաքշբենդի աղանդի աջակցությունից, հաստատվում է նաեւ նրանով, որ Օզալի ամբողջ ընտանիքը նրա հետեւորդն է: Դա հաստատվում է Էվրենի տվյալներով: Երկրորդը, դա չի բացառում նույնիսկ Թուրգուտ Օզալի եղբայրը՝ Կորկուտը, որը 1977 թ. մեջլիսի ընտրություններին (Ազգային բարգավաճման կուսակցություն, որի պարագլուխը Էրբաքանն էր) մասնակցել է միմիայն Նաքշբենդի աղանդի շեյխի խորհրդով եւ երրորդը, Օզալի մայրը բարվել է այդ աղանդների շեյխի գերեզմանի կողքին, որին ամեն մի մահկանացու չէր կարող արժանանալ: Տեղեկագրի կազմողները հանգում են այն եզրակացության, որ Օզալի կուսակցությունը կարող է դառնալ երկու մասի՝ աշխարհիկ հասարակարգի եւ իսլամական արմատականության կողմնակիցների միջեւ: Նրանց տվյալներով, իսլամն արդեն թափանցել է պետական շրջանակներից ներս, որը խախտում է Թուրքիայի, որպես աշխարհիկ պետության բնույթը: Այս բաժնում բերված են նաեւ տվյալներ աղանդների գործունեության մասին Արեւմտյան Եւրոպայում բնակվող թուրք բանվորների միջավայրում:

Չնայած Թուրքիայի անցյալի եւ ներկայիս սահմանադրությունները հռչակում էին եւ հռչակում են խոսքի, մամուլի եւ արհեստակցական ազատություններ, այստեղ մեծ է հետապնդվող լրագրողների թիվը: 1983–90 թթ. ընթացքում մամուլի դեմ կազմակերպվել է 57 դատական գործ: Ավելացել է ռազմական եւ պետական անվտանգության դատական ատյանների կողմից դատաքննված անձանց թիվը, վերականգնվել է մահվան դատավճիռը, քաղաքական բանտարկյալները ենթարկվում են տանջանքների:

Ազգային հարցեր

Տեղեկագրում որոշակի տեղ է հատկացված քրդական հարցին: Թուրքական իշխանությունները մի կողմից որոշ զիջումներ են անում քրդերին, մյուս կողմից արյան մեջ խեղդում նրանց ազատագրական պայքարը: Բերված են նաեւ տվյալներ ասորիների, այդ թվում կաթոլիկ ասորիների (խալդեերի) մասին, մինչեւ 20 հազար, որոնք հիմնականում բնակվում են Հաքքյարի եւ Սղերթ վիլայեթներում: Ինչ վերաբերում է հայ ազգաբնակչությանը, ապա նրա թիվն այժմ կազմում է ընդամենը 42 հազար, որոնց մեծ մասը ապրում է Ստամբուլում: Հայերի դրությունը միտում ունի դեպի վատթարացում: Այստեղ ավերվում են հայկական պատմական հուշարձանները, անմխիթար է հայկական ուսումնական հաստատությունների վիճակը: Կենտրոնի մասնագետները առաջադրում են մի շարք միջոցառումներ հայկական հարցի լուծման ուղղությամբ, եւ, նրանց կարծիքով, երկխոսություն հնարավոր է սկսել միայն Ինյոնյուի սոցիալ-ժողովրդական կուսակցության հետ: Այս բաժնի կազմակերպությամբ ցանկալի է, որ կենտրոնի մասնագետները անդրադառնային նաեւ հրեաների (էիրնակ), թուրքացած եւ հրեացած հայերի եւ թուրքացած հույների, լազերի եւ իսլամացած հրեաների (ղյոնմե) հարցերին:

Տնտեսությունը

Տեղեկագիրը հատուկ գլուխ է նվիրել Թուրքիայի տնտեսական քաղաքականության եւ տնտեսական դրության վերլուծությանը: Եզրակացությունն այն է, որ չնայած Օզալի վարած տնտեսական ազատական քաղաքականությանը, դեռ երկար տարիներ են հարկավոր, մինչեւ Թուրքիան դառնա ժամանակակից տնտեսություն ունեցող երկիր: Իսկ այժմ, երբ Օզալի կուսակցությունը 1991 թ. հոկտեմբերի ընտրություններից հետո զրկվեց իշխանությունից, Դեմիրել-Ինյոնյու կառավարության տնտեսական քաղաքականության հետեւանքների մասին խոսելը դեռ վաղ է:

Արտաքին քաղաքականությունը

Ուսումնասիրության երրորդ գլուխը նվիրված է Թուրքիայի արտաքին քաղաքականությանն ընդհանրապես, հարեւան երկրների հետ իր փոխհարաբերություններին՝ մասնավորապես: Հատուկ տեղ է հատկացված թուրք-հունական հարաբերությունների անցյալին եւ ներկային՝ Կիպրոս, ծովափնյա սահմաններ եւ դրա հետ կապված նավթի հետազոտում, օդային տարածության օգտագործում, Էգեյան ծովի կղզիների (Էրկոստասան) ռազմական կարգավիճակ, Արեւմտյան Թրակիայում ապրող թուրքերի դրություն եւ մի շարք արիք կնճռոտ հարցեր: Հունաստանի պահանջները պատմականորեն եւ կենսականորեն արդարացի են, բայց քանի որ Թուրքիան իր հզորությամբ մի քանի անգամ գերազանցում է Հունաստանին, նա վերջինիս հետ հարաբերությունների կարգավորման ոչ մի նախաձեռնություն հանդես չի բերում, հույս ունենալով, որ ժամանակն աշխատում է իր օգտին: Կիպրոսի հարցի լուծման կապակցությամբ փորձ է արված ցնցել նաեւ ԱՄՆ-ի քաղաքականությունը Թուրքիայի եւ Հունաստանի հանդեպ:

Փորձ է արված նաեւ վերլուծել Թուրքիայի Եւրոպական համայնքի մեջ մտնելու հնարավոր հեռանկարները: Նշվում է, որ Թուրքիայի միացումը ընդհանուր շուկային այստեղ կառաջացնի հոգեբանական ցնցում, քանի որ ազգաբնակչության աճը Թուրքիայում, ինչպես այդ մասին նշվեց վերեւում, ավելի է, քան Եւրոպայում: Հաշվարկների համաձայն, Եւրոպայի ազգաբնակչությունը 2000 թ. կազմելու է 330 մլն կամ 12 մլն հոգի, քան 1990 թ.: Քաղաքական տեսակետից կարող է ստացվել հետեւյալը: Թուրքիան արդեն ունի երկու եւրոպական դաստիարակ եւ 81 պատգամավոր Եւրախորհրդարանում 518-ից, իսկ ապագայում նա կարող է ունենալ Եւրախորհրդարանի անդամների մեկ երրորդը եւ գրավել ղեկավար դիրք նրա կազմում: Այս կապակցությամբ հեղինակները հարց են տալիս՝ հնարավո՞ր է հակաթուրք տրամադրությունների աճ Եւրոպայում: Հայտնի է, որ Գերմանիայում, Ֆրանսիայում եւ այլուր ուժեղ են ազգայնական տրամադրությունները արեւելքից եկած բանվորների դեմ: Գերմանիայում ժամանակ առ ժամանակ հնչում է հետեւյալ կարգախոսը՝ *«Գերմանիան գաղթականների երկիր չէ»*: Ահա թե ինչու Եւրահանձնաժողովը, պատրվակ բռնելով հայկական, քրդական եւ Կիպրոսի հարցերի չլուծված լինելու հանգամանքը, կանխում է Թուրքիայի լիիրավ անդամակցությունը: Վերջում հարց է բարձրացվում՝ արդյո՞ք Եւրոպան այնքան հաջողություն կունենա՞, որ Թուրքիային ստիպի բանակցությունների միջոցով լուծել հայերի, քրդերի եւ հույների հետ կապված հարցերը: Բավական մանրամասն վերլուծված են նաեւ Թուրքիայի եւ իր մյուս հարեւան երկրների հետ հարաբերությունների անցյալը, ներկան եւ ապագան:

Տեղեկագրում զետեղված են բազմաթիվ մանրամասն աղյուսակներ եւ քարտեզներ գրեթե բոլոր հարցերի վերաբերյալ:

Հայկական ուսումնասիրության կենտրոնի մասնագետները կատարել են ահռելի աշխատանք, հանդես բերել մասնագիտական բարձր մակարդակ, որը ենթադրում է բոնում գիտական եւ գործնական նշանակությամբ: Դա առավել եւս կարեւոր է, քանզի արիք հայկական կենտրոն, որը զբաղվի Թուրքիայի ներքին եւ արտաքին քաղաքականության հարցերով, դժբախտաբար առայժմ գոյություն չունի: Այժմ Թուրքիայի ուսումնասիրության հնարավորություն չունի նույնիսկ Հայաստանի Գիտությունների ակադեմիան: Ահա թե ինչու Ֆրանսիայում կատարված աշխատանքի նշանակությունն ավելի է կարեւորվում:

Ցանկալի է, որ սփյուռքի հայ արեւելագետները նմանօրինակ ուսումնասիրություններ կատարեն ոչ միայն Թուրքիայի, այլեւ Իրանի, Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Իսրայելի, Հորդանանի, Հունաստանի եւ Հայաստանի մյուս մոտիկ ու հեռու հարեւանների մասին, որոնց հետ առնչվում է Հայաստանի այսօրը եւ վաղը: Այսպիսի աշխատությունները մեծապես կաջակցեն Հայաստանի արտաքին քաղաքական ճիշտ, իրատես ուղղություն մշակելու դժվարին խնդրին:

Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Ռ. ԿՈՆԴԱԿՉՅԱՆ

Թուրքիան Գերմանիայի համար դառնում է դաշնակից

Վերջերս Անկարա այցելած Գերմանիայի արտաքին գործերի նախարար Կ. Կինկելին չհաջողվեց հարթել երկու երկրների միջեւ եղած խնդիրները, որոնք մոայլվեցին Գերմանիայից զենքի առաքման դադարեցումից հետո: Նույնիսկ չնայած այն բանին, որ Բոննի իշխանությունները հունիսի սկզբին վերացրին այն էմբարգոն, որը մտցվեց հրդեհի դեմ Թուրքիայի կողմից գերմանական զենքի օգտագործման կապակցությամբ: Մինչեւ հիմա Անկարան սկզբունքորեն համաձայն չէ իր նկատմամբ կիրառված պատժամիջոցներին, քանի որ իր գործողությունները համարում է համաձայնելի ՆԱՏՕ-ի երաշխավորությունների հետ: Խոսքը գնում էր ահաբեկչության դեմ պայքարի մասին, իսկ թուրքերը գտնում են, որ հենց այդ վտանգն է, որ հրդեհի կողմից սպառնում է իրենց: Սակայն Գերմանիան նախընտրությունը տալիս է մարդու իրավունքներին, որոնց խախտումը չի կարելի արդարացնել նույնիսկ հակաահաբեկչական գործողություններով:

Թուրքիան Գերմանիայի համար ունի աշխարհագրական եւ ռազմավարական նշանակություն: Բոնում գտնում են, որ Թուրքիան կայունացնող դեր է խաղում իսլամական ծգնաժամային եռանկյունում (Իրան, Իրաք, Սիրիա): Գերմանական դիվանագիտական շրջանակներում նաեւ հույս ունեն, որ Թուրքիայի արեւմտամետ կողնորոշումը կարող է լուրջ մրցակցություն լինել Իրանի հետ, Անդրկովկասի եւ Միջին Ասիայի նախկին խորհրդային հանրապետություններում ազդեցության համար պայքարում: Գերմանացիները անհանգստանում են, որ ԱՊՀ-ի այդ պետությունները, որոնց համար Ստամբուլը դառնում է «աշխարհի դարպասը», միանշանակ կկողմնորոշվեն դեպի թուրքական մոդելը: Շրջանում Թուրքիայի ազդեցության ուժեղացումը, գտնում են Բոննում, կբարդացնի այնտեղ մարդու իրավունքների խնդիրը: ■

ԱՊՀ-ի ամենամեծաթիվ կուսակցությունը

Հուլիսի 25-ին Տաշքենդում սկսվել է կուսակցական տոմսերի զանգվածային հանձնումը Ուզբեկստանի ժողովրդա-դեմոկրատական կուսակցության անդամներին:

Կուսակցությունը ԱՊՀ երկրների ամենամեծ քաղաքական կազմակերպությունն է, որի շարքերում ընդգրկված են 364 հազար անդամներ: Վերջին 3 ամիսների ընթացքում Ուզբեկստանի ԺԴԿ-ին է անդամագրվել ավելի քան 20 հազար մարդ, մեծամասնությամբ երիտասարդներ:

Առաջին տոմսերը տրվել են վետերաններին. կուսակցական տաժը հաշվելիս նկատի են առնվում նաեւ կոմունիստական կուսակցության շարքերում եղած տարիները: ■

digitised by A.R.A.R.@

Քրդերը զինյալ դայֆարը զուգակցում են քաղաքական քայլերի հետ

Քրդական շարժումը Թուրքիայում նոր փուլ է թեւակոխում

Դանիել Միտերանը եւ Բեռնար Կուշները Իրաքյան Քրդիստանում

Հյուսիսային Իրաքում անցկացված ընտրություններին հաջորդեցին քրդական ինքնավար Մեջլիսի ստեղծումն ու քրդական կառավարության ձեւավորումը: Եթե մի պահ ընդունենք, որ վերոհիշյալ տեղաշարժերը կարող են հրդական գործակցության ձեւավորման ուղղությամբ, ապա դարձ կդառնա Թուրքիայի մտավախությունների էությունը: «Ազգ»-ը դեռ ամիսներ առաջ նշել է, որ Թուրքիայի գերխնդիրը քրդական հարցն է: Հյուսիսային Իրաքում կատարված տեղաշարժերի հետ միասին, որոնք, անշուշտ, խթանում են քրդական շարժումը Թուրքիայի ներսում, տեղի ունեցան նաեւ այլ տեղաշարժեր: Հանձին վերակազմավորված Ժողովրդի աշխատանքային կուսակցության, քրդերին հաջողվեց շարժումը դնել սահմանադրական հիմքերի վրա: Ենթադրելի է, որ PKK-ի զինված դայֆարը Թուրքիայի դեմ այսուհետեւ միաձուլվելու է քաղաքական դայֆարին, եւ այդպիսով քրդական շարժումն էլ ավելի աղառնալից բնույթ է ստանալու, թեվակոխելով նոր փուլ: Քրդական ինքնավարության գոյությունը Թուրքիայի անմիջական հարեւանությամբ, PKK-ի զինված դայֆարը երկրի ներսում թուրքական դեմոքրատիայի, իսկ Եւրոպայում Թուրքիայի ներկայացուցչությունների դեմ, քրդական լոբբիի ձեւավորումը ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, նաեւ Շվեդիայում, զինյալ դայֆարի ներդաշնակումը Ժողովրդի աշխատանքային կուսակցության կողմից տարվող քաղաքական դայֆարի հետ նոր փուլի առանձնահատկություններն են:

Ինչպես նշում է «Հյուրրիյեթ»-ը, Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի Մեջլիսի ազգությամբ քուրդ դաշգամավորների կողմից բոլորովին վերջերս կազմավորված Ազատություն եւ հավասարություն կուսակցությունը նախ ինքնալուծարվեց եւ ապա իր ամբողջ կազմով միացավ Ժողովրդի աշխատանքային կուսակցությանը: Հիշեցման կարգով նշենք, որ Ժողովրդի աշխատանքային կուսակցության մասնակցությունը 1991 թ. հոկտեմբերի 20-ին Մեջլիսի ընտրություններին արգելվել էր քրդական իշխանությունների կողմից այն պատճառաբանությամբ, թե դա հանդես է գալիս որպես քրդական ազգային կուսակցություն: Այնուամենայնիվ, այդ կուսակցության դաշգամավորության թեկնածուները մասնակցել էին ընտրություններին հանդես գալով Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության թեկնածուների ցուցակներում եւ Մեջլիսում ստացել էին 20 տեղ: Ընտրություններից հետո դաշգամավորներից շատերն իրենց կարգը խզեցին Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցության հետ: Այնուհետեւ ստեղծվեց Ազատություն եւ հավասարություն կուսակցությունը: Վերամիավորումից հետո Ժողովրդի աշխատանքային կուսակցությունը Մեջլիսում ստացավ 18 դաշգամավորական տեղ: Թեեւ այդ թիվն այդ կուսակցությանն իրավունք չի տալիս Մեջլիսում դաշգամավորական խումբ ստեղծելու, դրա համար անհրաժեշտ են 20 տեղեր, բայց եւ այնպես, զգալի ուժ է քրդական դայֆարը Մեջլիսի դաշտերից ներս տեղափոխելու, քուրդ ազգի դաշգամավորներին քաղաքական մեկ կազմակերպության մեջ համախմբելու համար: Այդ առումով դաշտահական չէ Թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից Ժողովրդի աշխատանքային կուսակցությունը փակելու նպատակով գործի հարուցումը:

Ըստ «Հյուրրիյեթ»-ի, այն բանից հետո, երբ երկու կուսակցությունները միավորվեցին մեկ կազմակերպության մեջ, ինքնալուծարվի ենթարկված Ազատություն եւ հավասարություն կուսակցության նախագահ Մահմութ Ալբնամը, Ժողովրդի աշխատանքային կուսակցության նախագահ Ֆերիդուն Յազարի հետ միասին կազմակերպեցին մամուլի ասուլիս եւ սահմանադրական դատարանի դիտավորության առթիվ մասնավորապես ասացին հետեւյալը. «Դատարանը գտնում է, որ Թուրքիայում քուրդ եւ քուրդ ժողովուրդների առկայության մասին խոսելն օրենքի խախտում է, քանի որ երկու տարբեր ժողովուրդների գոյությունը միացյալ երկրում կամ նման փաստերի արձանագրումը ինքնին նշանակում է զարկ տալ անջատողական միտումներին: Եթե այդպես է, ապա անհրաժեշտ է դատապարտել եւ անմիջապես կախաղան բարձրացնել նախագահ Թուրգուտ Օզալին, Թուրքիայում քրդական Ֆեդերացիայի վերաբերյալ նրա ելույթների համար: Անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել երկրում կոալիցիոն կառավարության մաս կազմող Ճեմարիտ ուղի եւ Սոցիալ-դեմոկրատական ժողովրդական կուսակցությունների գործունեությունը, որովհետեւ այդ կուսակցության նախագահներ Սուլեյման Դեմիրելն ու Էրդալ Ինյոնյուն վաղուց ադեն համակերպվել են Թուրքիայում քուրդ ազգաբնակչության գոյության փաստի հետ»:

ՀԱԿՈԲ ՉԱՔԵՐՅԱՆ

«Միջազգային ներում»

Կառավարությունները մեղավոր են մարդու իրավունքների խախտման համար

Աշխարհում շարունակվող մարդու իրավունքների լայնածավալ խախտումների հիմնական պատասխանատվությունն ընկնում է պետությունների ղեկավարների վրա, որոնք իրենց հատուկ ծառայություններին թույլատրում են մարդկանց սպանել, առեւանգել, տանջել, այն արդարացնելով ընդդիմադիր խմբավորումների դաժանությամբ:

Այսպիսի եզրակացություն է պարունակվում «Միջազգային ներում» կազմակերպության տարեկան զեկուցման մեջ, որում վերլուծության է ենթարկվում մարդու իրավունքների վիճակը 142 երկրներում: Հայտնի ավելի երկրներում կալանավորները ենթարկվում են խոշտանգումների ու տանջանքների, 26-ում շարունակում են անհետանալ զոհություն ունեցող վարչակարգերի հակառակորդները, 45-ում գնդակահարում են առանց դատի եւ հետաքննության: Նշելով, որ ամբողջապես Եւրոպայում մարդու իրավունքների վիճակը կոմունիստական վարչակարգերի անկումից հետո բարելավվել է, «Միջազգային ներումը» տագնապ է հայտնում միջէթնիկական շարունակվող հակամարտությունների վերաբերյալ: Հարավսլավիայում, օրինակ, քաղաքացիական պատերազմը հանգեցրեց մարդու իրավունքների լայն խախտումների, ընդհուպ մինչեւ քաղաքացիական անձանց տանջանքների եւ զանգվածային սպանությունների:

Մարդու իրավունքների խախտումները շարունակվում են նաեւ նախկին Խ. Միության որոշ հանրապետություններում, որտեղ ազգամիջյան հակամարտությունների հետեւանքով զոհվում են հարյուրավոր մարդիկ, իսկ գերի ընկածները կամ բանտարկվածները ենթարկվում են տանջանքների եւ խոշտանգումների: Մարդու իրավունքներն ավելի բացահայտ արհամարհվում են Ադրիկայում: Առանց դատի ու հետաքննության գնդակահարությունները, նշվում է զեկուցագրի մեջ, կիրառվում են Չադում, Մալիում, Մավրիտանիայում եւ Ռուանդայում: Քաղաքական բարենորոգումների համար հանդես եկող ցուցարարները գնդակահարվել են Կամերունում, Զաիրում, Մադագասկարում: Մյուս կողմից, Անգոլայի իշխանություններն ազատ են արձակել 2 հազար քաղբանտարկյալների:

Զեկուցման մեջ որպես մարդու իրավունքների գլխավոր խախտող երկիր հանդես է գալիս Իրանը: «Միջազգային ներում»-ը նաեւ անհանգստություն է ցուցաբերում ԱՄՆ-ում Պարսից ծոցի պատերազմին մասնակցելուց հրաժարված զինծառայողների նկատմամբ դատավճիռների կայացմամբ: Չինաստանում, նշվում է զեկուցման մեջ, շարունակվում են հալածանքները քաղաքական եւ կրոնական այլախոհների դեմ: Ընդհանրապես, այդ իրավապաշտպան կազմակերպության գնահատականներով, ներկայումս 65 երկրների բանտերում գտնվում են 3 հազարից ավելի «խղճի կալանավոր» եւ քաղբանտարկյալ, որոնց նկատմամբ մեղադրանք չի հարուցվել: ■

«ԳԴՀ-ն վերակառուցման զոհը դարձավ»,

պնդում է Էրիխ Հոնեկերը Գերմանիայում լույս տեսած իր գրքում

Էրիխ Հոնեկերն ըստ երեւույթին ցանկանում է հետ չմնալ իր նախկին համախոհներից, որոնց մոտ իշխանությունը կորցնելուց հետո հանկարծակի բացահայտվում է գրական ձիրքը: Մոտ օրերս գերմանացի ընթերցողներն կծանոթանան նրա նոր գրքին: *Ռոյքը* գործակալության հաղորդմամբ, նախկին Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ղեկավարն իր հուշերում մեղադրում է ԽՍՀՄ նախկին նախագահ Միխայիլ Գորբաչովին եւ միջազգային հակակոմունիստական շարժումը, պնդելով, որ նրանց պատճառով ինքը զրկվեց իշխանությունից:

«Սոցիալիստական գրեթե բոլոր երկրներում տեղի է ունեցել հակահեղափոխականների գործունեություն, որը դեկավարվել է դրսից, ասվում է *«Էրիխ Հոնեկեր. Դրամատիկ իրադարձություններ»* գրքում, որի մի քանի գլուխները սկսել է հրապարակել *«Շպիգել»* ամսագիրը: *Արեւելյան Գերմանիան,* այնուհետեւ ասվում է գրքում, *վստահում էր իր մոսկովյան դաշնակցին, որը մեզ հետ երբեք չէր քննարկել երկու Գերմանիաների միավորման քաղաքականությունից հրաժարվելու հնարավորությունը»:* Սակայն 1987 թվականին Է. Հոնեկերը *«Վաշինգտոնից ստացավ մի տեղեկություն»,* որից իմացավ, որ *«ԳԴՀ-ն կհանձնվի որպես վարձ ընդհանուր եւրոպական տան փոխարեն»:*

«ԳԴՀ-ն դարձավ վերակառուցման զոհասեղանին ամերիկյան եւ գերմանական իմպերիալիզմին», գրում է նա: Եւ թեպետ իր գրքում Հոնեկերը ոչ մի անգամ չի հիշատակում Գորբաչովի անունը, սակայն նրա գայթակղությունը միանշանակ ուղղված է մի մարդու դեմ, որն անցյալ տարի նոյնատեղ Գերմանիայից ռազմական ինքնաթիռով իր փախուստին:

Հոնեկերը հայտարարում է. *«Սոցիալիզմը չի անհետացել համաշխարհային բեմից եւ չի իջնի նրանից»:* Իր դեմ Գերմանիայում հարուցված մեղադրանքները Հոնեկերը գնահատում է որպես *«քաղաքական վրիժառություն»* եւ պետական մակարդակով հակակոմունիզմի արտացոլում. *«անհնար է գտնել»* նրա հայտնի հրամանը գնդակահարել սահմանը խախտողներին, *«որովհետեւ այն գոյություն չունի»:* Ի վերջո ճշմարտությունը կհաղթի, թեպետ ինքը պատրաստ չէ վերադառնալ հայրենիք եւ կանգնել դատարանի առջեւ, հայտարարել է Հոնեկերը: Նա անձնատեսությունը նախընտրում է ավելի շատ ինքնատաղանություն գործել, քան կանգնել *«հաղթողների արտակարգ դատարանի առջեւ»:* ■

ՄԱԿ-ի Ֆինանսական ծանր բեռը

Խաղաղության պահպանումը օրեցօր ավելի է թանկանում

Մեր ժամանակների խոշոր միտումն է՝ առանց «երկնագույն սաղավարտների» ավելի շատ երկրներ ու ժողովուրդներ ի վիճակի չեն լուծել իրենց կնճռոտ խնդիրները: ՄԱԿ-ի երկնագույն դրոշի ստվերը կամաց-կամաց մոտենում է նաեւ մեր սահմաններին: Տարբեր մակարդակներում արդեն բացեիբաց ասում են, որ, ըստ երեւույթին, նաեւ ԱՊՀ-ին չի հաջողվի մնալ առանց կողմնակի ռազմական ուժի օգնության, նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղը, Պրիդնեստրովիեն եւ հնարավոր է նաեւ Ղրիմը:

Միայն այս տարի ՄԱԿ-ը ստիպված եղավ շտապ կերպով իր զորքերի խոշոր միավորումները ուղարկել այնպիսի երկրներ, ինչպիսիք են Հարավսլավիան եւ Կամբոջան՝ համապատասխանաբար 14 եւ 22 հազար մարդ: Վերջին երեք տարում ավելի շատ գործողություններ իրագործվեցին, քան նախորդ 10 տարում: Դեռ չեն սառել հակամարտության այնպիսի տաք գոտիները, ինչպիսիք են իրանա-իրաքյան, իրաք-քուվեյթյան, նամիբիական, անգոլական, կիպրոսյան, արեւմտասահարյան, հնդկա-պակիստանյան, լիբանանյան, պաղեստինյան եւ այլ հակամարտությունները: Այդ գոտիներում ներկայումս գտնվում են դիտորդների առաքելություններ եւ «երկնագույն սաղավարտների» ջոկատներ, որոնց Ֆինանսավորումը կատարվում է ՄԱԿ-ի հատուկ բյուջեից:

Տարօրինակ է հնչում, սակայն փաստը մնում է փաստ. խաղաղության պահպանումը ավելի ու ավելի է «թանկանում»: Անշուշտ, այդ ծախսերը ոչ մի կերպ չի կարելի համեմատել պատերազմի եւ սպառազինության վազքի հետ, որոնց նկատմամբ մեր գիտակցությունը կարծես թե ընտելացել է, սակայն ակնառու է նաեւ այն, որ դժվարանում է մեկից դրամ տրկել որեւէ աղահովության համար: Ոչ ոք ավելորդ դրամ չունի եւ յուրաքանչյուրը ցանկանում է նվազեցնել իր բաժինը խաղաղության ընդհանուր կաբասյում: ՄԱԿ-ում այդ հարցի վերաբերյալ բանավեճերը հատատեցին այդ միտումը:

Ըստ ՄԱԿ-ի կանոնակարգի, «երկնագույն սաղավարտները» մարտական գործողություններին չեն միջամտում: Սակայն առ այսօր տարբեր երկրներում «երկնագույն սաղավարտներից» զոհվել է 772 մարդ: Կան նաեւ գործողություններ, որոնք անցկացվում են Անվտանգության խորհրդի օրհնությամբ, սակայն բացարձակապես նրա մասնակիցների ուժերով եւ միջոցներով: Դրա օրինակն է «Փոթորիկ անապատում» գործողությունը, որն իրականացվեց հակաիրաքյան դաշինքի ուժերով եւ նստեց 100 միլիարդ դոլար:

Պետք է ենթադրել, որ ամենամոտ ժամանակներս ՄԱԿ-ի կանոնակարգը վերանայման չի ենթարկվի, իսկ գործելակերպը Անվտանգության խորհրդում կմնա նախկինը: Ինչ վերաբերվում է անդամավճարներին, ապա այն կարիք ունի վերանայման: ԽՍՀՄ փլուզումից հետո եւ ՄԱԿ-ում տասից ավելի նոր անդամների երեւան գալը կդահանջի հստակեցնել նրանց անդամավճարները: Մոտ օրերս ՄԱԿ-ի հատուկ կոմիտեն կզբաղվի դրանով: ■

ՆԱՏՕ-ն Ադրբեջանի հետ քննարկում է պաշտպանության հարցեր

Բոնն. ՆԱՏՕ-ի անդամ երկրների եւ նախկին Խ. Միության աշխատանքային սեմինարում, որը տեղի ունեցավ հուլիսին Բրյուսելում, շատ հարցերի հետ մեկտեղ քննարկվեցին նաեւ քաղաքական պաշտպանության ծրագրավորման հարցերը: Մասնավորապես ընդունվեց որոշում, ըստ որի Ադրբեջանին թույլատրվում է իր զինված ուժերում ունենալ մինչեւ 220 տանկ, 220 զրահամեքենա, 100 մմ տրամաչափի ավելի քան 285 հրանոթային կայանք, 100 մարտական ինքնաթիռ եւ 50 ուղղաթիռ:

Որոշված է նաեւ, որ հանրապետության ազգային բանակի սպաները կարող են անվճար ուսուցման կուրսեր անցնել Մեծ Բրիտանիայում եւ ԱՄՆ-ի զինվորական ուսումնական հաստատություններում: Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի 1995 թ. հոկտեմբերից: ■

digitised by A.R.A.R.@

ԽՄԿԿ միջազգային գործունեության մութ էջերը

Դավաճանության խոստովանություն

Իրանի Թուդեհ կուսակցության ղեկավարները մեղա են գալիս Մոսկվայի հետ իրենց կապի համար

Այժմ արդեն զարմանք չեն պատճառում այն հաղորդումները, թե ինչպես ԽՄԿԿ կենտկոմը աջ ու ձախ խոշոր գումարներ էր տրամադրում դասակարգային պայքարի իր արտասահմանյան գործակիցներին: Այդ մասին բազմաթիվ նյութեր են հրապարակված: Սակայն ավելի փիչ են լուսաբանված դրա արդյունքները, հատկապես Արևելքում, որտեղ կոմունիստները գործում էին ընդհատակում կամ կիսալեգալ պայմաններում: Այդ տեսակետից բնորոշ է Իրանի ժողովրդական կուսակցության՝ Թուդեի ճակատագիրը:

1983 թվականի ապրիլյան այդ երեկոն ցնցեց թեհրանցիներին: Հեռուստատեսությամբ ելույթ էր ունենում Իրանի ժողովրդական կուսակցության առաջին քարտուղար Նուրեդդին Քիյանուրին. *«Այսօր ամոթի մեծ զգացումով եւ ափսոսանքով եմ դիմում Իմամ Խոմեյնիին եւ հանձնաժողովներին, որպեսզի պատմեմ Թուդեհ կուսակցության մեղքերի մասին... Այդ մեղքերից առաջինը եւ ամենակարեւորը կայանում է նրանում, որ մեր գործունեությունում գլխավոր տեղը գրավեց ոչ թե քաղաքականությունը, այլ լրտեսությունը եւ իսլամական հանրապետության դեմ դավաճանությունը: Ես այդ մասին նշեցի հետաքննության ժամանակ: Մենք ռազմական եւ քաղաքականության գործի մասին գեկույցներ էինք ուղարկում Խ. Միությունը»:*

Այդ օրը միայն Քիյանուրին չէր, որ «սարսափելի» ցուցմունքներ տվեց կուսակցության դեմ, որի անդամն էր եղել մի քանի տասնամյակ: Թուդեի մյուս ղեկավարներն էլ էին մեղա գալիս: Թերեւս ամենաողբերգական պատկերն ուներ կենտկոմի անդամ Ալի Ամուին, որը 24 տարի տառապել էր բանտերում, ազատ արձակվել իսլամական հեղափոխության ժամանակ եւ այնուհետեւ նորից բանտարկվել արդեն Խոմեյնիի վարչակարգի օրոք: Դիմելով իր համախոհներին, նա կոչ արեց. *«Ձեր կուսակցությունը բըվան եւ աշխատավոր ժողովրդի կուսակցություն չէ: Դա գործիք է Խորհրդային Միության ձեռքին: Եթե սիրում եք ձեր ժողովրդին, պետք է ուշի գաք»:*

Մի քանի ամիս անց հեռուստատեսային ինքնամերկացումները շարունակվեցին: Կենտկոմի անդամ Ղ. Ղանեմփանահը հայտարարեց. *«Ողջունում եմ իսլամական հեղափոխության մեծ ղեկավար Իմամ Խոմինչեւ հեռուստատեսությամբ ցուցադրելն այս մարդկանց պահել էին բանտերի զնդաններում: Ելույթ ունեցողների մեծամասնության արտաքին տեսքը շատ բանի մասին էր ասում: Առաջին քարտուղար Քիյանուրին եւ նրա ընկերներն ուժասպառ էին երեւում: Անհերեւակայելի էր թվում, որ կուսակցության ղեկավարները կարող են այդպես անկեղծորեն հրաժարվել իրենց համոզմունքներից: Սակայն այսօր, տասը տարի անց, ես համոզված չեմ, թե նրանց խոստովանանքները բոլոր դեպքերում էին եղել ստիպողականության արդյունք... Նրանցից շատերը հիասթափվել էին «մեծ եղբայր» Մոսկվայից»:*

«Մեծ եղբայրը», այսինքն ԽՄԿԿ-ն կանգնած էր Թուդեի քիկունքին, նրա ծննդյան պահից՝ 1941-ից: Եւ երբ Ֆիզիկական եւ բարոյական ազդեցությունից կտրված իրանական կուսակցության ղեկավարները խոստովանեցին, որ ծառայել էին Մոսկվային եւ վարձատրվում էին նրա կողմից, դա սոսկ մտացածին չէր:

Հատկանշական է, որ ԽՄԿԿ-ն գործում էր Թուդեի հետ ոչ թե անմիջականորեն, այլ Գերմանական Դեմոկրատական Հանրապետության միջոցով: Բանն այն է, որ շահի օրոք կուսակցության գրեթե բոլոր ղեկավարները գտնվում էին վտարանդիության մեջ՝ սկզբում ԽՍՀՄ-ում, իսկ հետո ԳԴՀ-ում: Իսկ երբ շահի վարչակարգը սկսեց խարխլվել, Մոսկվան եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է իրանական կոմունիստներին աջակցել: Թուդեի ղեկավարներից մեկը, խնդրելով չնշել իր անունը, ասաց. *«...Մոսկվայում հույս չունեին, թե մենք կկարողանանք վերցնել իշխանությունը: Հաշվարկն ավելի համեստ էր՝ օգտագործել Թուդեն Իրանում խորհրդային ազդեցության ուժեղացման նպատակով»:*

Կուսակցության ղեկավար միջուկը, տեղափոխվելով ԳԴՀ, շնորհիվ ԽՄԿԿ-ի ներարկումների, որոնք անցնում էին Կարմիր խաչի՝ քաղվարվածներին օգնության հիմնադրամների եւ նման այլ կազմակերպությունների խողովակով, վարում էր անհոգ կյանք: Լայպցիգում ապրում էին իրանական կուսակցության 20-25 ղեկավար գործիչներ իրենց ընտանիքներով: Գտնվելով հայրենիքից հեռու, երկար տարիների ընթացքում ԻԺԿ ղեկավարները կորցրել էին կապը երկրի հետ: Լայպցիգում տեղի ունեցած կուսակցության պլենումը որոշեց վերադառնալ տուն եւ նույնիսկ ստացավ այն ժամանակվա լիբերալ կուսակցության թույլտվությունը: Երեկվա վտարանդիները եւ ընդհատակյա աշխատողները անցան Խոմեյնիի կողմը, չմոռանալով, իհարկե, իրենց հովանավորին եւ ամեն հարմար առիթով ընդդիմադիրներին ապացուցելով, թե ԽՍՀՄ-ը Իրանի բարեկամն է եւ նրան կդաշտանի ամերիկացիներից:

Թվում էր, իսլամական հանրապետությանը ի՞նչ վնաս կարող է հասցնել այդպիսի անատամ քաղաքական գիծ ունեցող կուսակցությունը: Այնուամենայնիվ, հեղափոխության չորրորդ տարում կացինը իջավ նաեւ նրա գլխին: Իսլամական արմատականների վարչակազմը չէր կարող թույլ տալ որեւէ գաղափարական հերետիկոսություն, առավել եւս մարքսիստական քարոզչություն: Բացի դրանից, կար նաեւ մի ուրիշ պարագա: Թուդեի համար ճակատագրական դեր ունեցավ խորհրդային դեսպանության մի աշխատակցի դավաճանությունը, որը ՊԱԿ-ի կողմից իրականացնում էր կապը «եղբայրական» կուսակցության հետ: Փախուստից հետո նա շտապով հայտնվեց Անգլիայում եւ դրանից հետո անմիջապես սկսվեցին իրանական կոմունիստների համատարած բանտարկությունները: Մոսկվան ոչինչ չարեց, որպեսզի պաշտպանի իր վաղեմի բարեկամներին: «Պրավդա»ում հրապարակված հոդվածները, որոնք իրենցից ներկայացնում էին արտասահմանյան կոմունիստական մամուլից արտատպություններ, ոչ մի տպավորություն չթողեցին իրանական պետությունը ղեկավարող հոգեւորականության վրա:

Ինչ էլ ասեն այսօր խորհեն կոմունիզմի մասին, Իրանում այս ուսմունքի համախոհների ճակատագիրը սոսկալի եղավ: Կուսակցության ԿԿ անդամներին բռնում եւ ենթարկում էին խոշտանգումների: Կենտկոմի եւ քարտուղարի կազմից իրանական դատավորները կենդանի թողեցին միայն Քիյանուրիին եւ հինգ ուրիշ մարդու: Մոտ տասը հոգի այժմ գտնվում են արտասահմանում:

Այսպիսի տխուր պատմություն ունեցավ կոմունիզմի գաղափարախոսությանը պատկանող Իրանական ժողովրդական կուսակցությունը եւ նրա հարյուրավոր անդամները:

Հ.Լ.

Ալի Աղջան Հռոմի պապին մաղթում է շուտափույթ ապաքինում

Գրեթե չորս ժամ տեւեց վիրաբուժական գործողությունը, որի ընթացքում Հովհաննես-Պողոս 2-րդի մոտ հեռացվեց մի քարտակ ուռուցք: Վիրահատությունը բարեհաջող անցավ եւ Հռոմի պապը շուտով անցավ իր «աստվածային» գործին: Աշխարհում միլիոնավոր հավատացյալներ այդ օրերին աղոթում էին Պապի համար: Երկրագնդի բոլոր անկյուններից հեռագրեր են ստացվում: Հեռագիրների թվում կա նաեւ Միխայիլ Գորբաչովի մաղթանքը:

Հռոմի պապին շուտափույթ ապաքինում ցանկացավ նաեւ տխրահռչակ թուրք «գորշ գայլ» Ալի Աղջան, որը պապի վրա կրակել էր 1981 թվականի մայիսի 13-ին: Սակայն միայն այդ քայլով չէ, որ Աղջան, ցմահ գտնվելով իտալական բանտում, իր վրա ուշադրություն բեւեռեց: Օրերս, հայտնում է *Ռոյթեր* գործակալությունը, Աղջան իտալական հեռուստատեսությամբ մի հարցազրույց տվեց, հայտարարելով, թե խորհրդային Միությունը մասնակից է եղել 1981 թվականին Հովհաննես-Պողոս 2-րդի վրա մահափորձ կատարելուն: *«Հռոմի պապը նախկին խորհրդային կայսրության թիվ մեկ թշնամին է եղել»*, ասաց «գորշ գայլ» Աղջան: Նա վկայակոչեց նաեւ մի նամակ, որը պապը իբր ուղարկել էր Լեոնիդ Բրեժնեւին 1980 թվականին, որում պատուհանվում էր նախազգուշացում այն մասին, թե ինչը կվերադառնա Լեհաստան, որպեսզի ղեկավարի լեհերին, եթե Մոսկվան փորձի ոչնչացնել «Համերաշխություն» արհմիությունը: Աղջկան նաեւ ասաց, որ պապի վրա հարձակման մասին հրամանը տվել էր Յուրի Անդրոպովը:

Դատի ժամանակ Աղջան ՊԱԿ-ին մեղադրեց այն բանում, որ նա մահափորձին ընդգրկել էր բուլղարական հատուկ ծառայություններին: Իտալական դատախազությունը փորձել էր գտնել ապացույցներ այն մասին, որ երեք բուլղարացիներ եւ նաեւ երեք թուրքեր Աղջայի հետ պայմանավորվածություն ունեին: Նրանց մեղավորությունը չհաստատվեց, չնայած օգտագործվել էր իրավաբանական ծեւակերպում, որի համաձայն դատարանը լրիվ համոզված չէ նրանց անմեղության մեջ: ■

Ֆրանսիան «Կոզա Նոստրայի» նշանաբանության տակ է

Սիցիլիական մաֆիան գործում է Երկնագույն ափին

Սիցիլիական մաֆիայի կողմից Պալերմոյում իրավապահ մարմինների աշխատակիցների վերջին սպանություններն զգալի արձագանք ստացան Ֆրանսիայում: Ոստիկանները եւ քաղաքական գործիչները գտնում են, որ տխրահռչակ մաֆիոզային խմբավորումը՝ «Կոզա Նոստրան» խոր արմատներ է գցել երկրի հարավում:

Այստեղ սպանվեց Ջովաննի Ֆալկոնեն

Թմրադեղերի վաճառքից եւ այլ մութ գործարքներից ստացած փողերը մաֆիան ներդնում է հատկապես շինարարության, անշարժ գույքի եւ թղթախաղի մեջ: Մաֆիան Ֆրանսիայի Երկնագույն ափերին հաստատվեց դեռ 1957 թվականին, պատմում է ոստիկանական կոմիսար Նգուեն Վան Հոկը՝ մաֆիայի դեմ պայքարի գլխավոր մասնագետը: Այն ժամանակ Սիցիլիայում տեղի ունեցավ եւրոպական եւ ամերիկյան մաֆիաների հանդիպումը, որտեղ նրանք իրավունք ստացան զբաղվել դեղի Ամերիկա առաքմամբ: Այդ «պատմական» հանդիպմանը մասնակցեցին նաեւ Ֆրանսիական հանցավոր աշխարհի ներկայացուցիչները: Սարսելում ստեղծվեցին մաքուր հերոինի ստացման հազվագյուտ լաբորատորիաներ: Այստեղ մաֆիան թափանցեց Ֆրանսիա: Հետագայում սիցիլիական հայտնի ննջիչ Ջովաննի Ֆալկոնեին, որը վերջերս սպանվեց Պալերմոյում, հաջողվեց հաստատել, որ մաֆիայի կապերը մարսելցի ելուզակների հետ տարեցտարի ամրապնդվում էին: Իտալական ննջիչին շատ բան պատմեց նախկին մաֆիական Անտոնիո Կալդերոնեն, որը հաշվեհարդարից թաքնվեց Նիսում: Նգուեն Վան Հոկին, որն աղաչվում էր Ջովաննի Ֆալկոնեի անվտանգությունը Ֆրանսիայում նրա այցի ժամանակ, Կալդերոնեի մերկացումները ուղղակի ցնցեցին: Դրանցից պարզվեց, որ մաֆիան գործում է ամենուր եւ, իհարկե, հսկում էր թմրադեղերի վաճառքը նաեւ երկնագույն ափին: Եթե Ֆրանսիան չձեռնարկի մաֆիայի դեմ պայքարի անհրաժեշտ միջոցներ, ընդգծում է Նգուեն Վան Հոկը, նրան սպասվոր աղետ է սպառնում: Երկրի հարավում այն խառնված է տարբեր տեսակի գործարքների անշարժ գույքի, շինարարության ֆինանսավորման եւ հողերի գրաման գործին: Միացյալ Եւրոպայի ստեղծումը, երբ առանձին պետությունների միջեւ չեն լինի ներքին սահմաններ, բավականին կհեշտացնի «Կոզա Նոստրայի» խնդիրը:

Մաֆիան, ասում է Ֆրանսիական հայտնի գրող Մաֆս Գալոն, մի՞ արտակարգ երեւույթ է, որը արտացոլում է 20-րդ դարի ամբողջական միտումները: Դա մի ամբողջական հանցավոր կուսակցություն է, որն ունի իր գաղափարախոսությունը: Տեսեք, թե Արեւելյան Եւրոպայի կոմունիստական կուսակցությունները ինչպես են կերպարանափոխվում մաֆիոզ կազմակերպությունների: Նրանք գործում են միեւնույն սկզբունքներով:

Այն վտանգը, որն իրենից ներկայացնում է «Կոզա Նոստրան», Ֆրանսիայում անհանգստություն է առաջացնում: Ազգային ժողովի պատգամավոր Ֆ. դ'Օբերը առաջարկեց ստեղծել խորհրդարանական հանձնաժողով, որը կզբաղվի դեղի Ֆրանսիա սիցիլիական մաֆիայի թափանցման հետ կապված հարցերով եւ կմշակի կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ծրագիր: ■

Կեռասի ուժը

Մի՛ թափեք կեռասի կորիզները

Վառելանյութի գների բանկացման եւ երջակա միջավայրի մաքրության պայքարի պայմաններում, վերջին ժամանակներս խիստ աճել է հետաքրքրությունը այլընտրանքային էներգիայի աղբյուրների, նկատմամբ: Այդ հետաքրքրությունը Հայաստանում, կրկնակի երջափակման պայմաններում, ունի այլ իմաստ եւ նշանակություն՝ ապահովել ժողովրդի, հանրապետության վերապրումը: Սակայն Հայաստանում ոչ ոք երեւի չէր մտածել այլընտրանքային էներգիայի այն աղբյուրի մասին, որից մեր հանրապետությունում առատորեն կա եւ բառացիորեն թափվում է ծառից:



Ասենք, այդ մասին գուցե չէին մտածել նաեւ աշխարհի որիշ երկրներում, բացի Միչիգանի (ԱՄՆ) նահանգի Տրավերս քաղաքից, որտեղ կոոպերատիվ մի ագարակում վերջերս սկսեցին օգտագործել այլընտրանքային այդ «վառելանյութը», իրենց տպագրական մեքենան աշխատեցնելու համար: Առաջիկա աշնանից սկսած ագարակը աշխատելու է կեռասի կորիզով, շուրջ 1400 տոննա կորիզից ստանալով տարեկան 3 մլն 100 հազար դոլարի խնայողություն:

Անշուշտ, կեռասի կորիզները չեն կարող փոխարինել նավթահորերին, եթե նույնիսկ ամբողջ երկրագունդը կեռասենիներով ծածկված լիներ, սակայն մեր պայմաններում այն կարող է նույնիսկ ծառայել, հատկապես պտղագործարաններում, որտեղ սովորաբար այն թափվում է:

Վառելանյութ արտադրելու համար կորիզները կոտրատվում են, չորացվում, աղա խտացվում փոքրիկ խորանարդների ձեւով: Այնուհետեւ խորանարդը երկու նյութի է վերածվում, առաջինը՝ ակտիվացված կարբոն, որը կարելի է վաճառել որպես ջրի ֆիլտրերի հիմնական բաղադրամաս, իսկ երկրորդը դառնում է մեքանի, թթվածնի եւ կարբոն մոնոքսիդի խառնուրդ: Այս վերջինն է, որ բանեցնում է բոյլերը, որից արտադրվում է էոգի, որը աշխատեցնում է տուրբինը, որն արտադրում է էլեկտրականություն: *«Այս տեխնոլոգիան նվազեցնում է էլեկտրականության եւ ջեռուցման ծախսը, արտադրում արժեքավոր ակտիվացված կարբոն եւ այգեգործներին օգնում ձերբազատվելու կորիզներից»*, հայտարարել է Միչիգանի նահանգի հանրային ծառայությունների համակարգող պաշտոնյան: *«Եւ ամենակարեւորը՝ հարյուր տոկոսանոց տեխնոլոգիա է, առանց որեւէ մնացորդի»:*

Կարո՞ղ ենք Հայաստանում կիրառել:

Պղատում ենք շահագրգիռ մարդկանց պատասխանին: ■

digitised by A.R.A.R.@

Հակահայ արշավ Կանադայում

ՌԱԿ Բոստոնի գրասենյակից հայտնում են, որ «փախստական հայերի» անվան տակ Կանադա եւ Մ. Նահանգներ գաղթած ադրբեջանցիներ, տեղական որոշ հոսանքների հաջողությամբ եւ մասնակցությամբ, սկսել են ակտիվացնել իրենց հակահայ քարոզչությունը, անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով բուկլետներ բաժանելով, ժողովրդական ներկայացուցիչներին, հիմնարկներին եւ պետական պաշտոնյաներին նամակներ ուղարկելով եւ ցույցեր ու հավաքներ կազմակերպելով:

Իրեն *«Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի ժողովրդին ի նպաստ ցույցի կազմակերպիչ հանձնախումբ»* կոչող մի խմբակ հետեւյալ բուկլետն է գրել կանադացիների մեջ, հակահայ տրամադրություններ արթնացնելու նպատակով: Թարգմանաբար տրվող այդ բուկլետի բովանդակությունը, ծայրեծայր սուտ եւ հերյուրածո, իսկապես կարող է տպավորություն ստեղծել անտեղյակ մարդկանց մոտ: Նկատելի պարագան այդ բուկլետում այն է, որ ուղղված է հատկապես Հայաստանի իշխանությունների եւ անձամբ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ, Հայաստան-Կանադա միջպետական հարաբերություններին խանգարելու ակնհայտ միտումով:

«Սիրելի բարեկամներ եւ կանադացի հայրենակիցներ

Այս ցույցը կազմակերպվում է ադրբեջանցի ժողովրդին նեցուկ կանգնելու համար: Այդ ժողովուրդը ներկայումս ջարդի է ենթարկվում հայկական վարչակարգի կողմից, որը ոչնահարում է աշխարհի բոլոր ժողովուրդների եւ կառավարությունների կողմից ընդունված եւ հարգված օրենքները:

Հայկական կառավարությունը գործի է դրել իր ահաբեկչական ողջ զորանոցն ընդդեմ անզեն եւ անպաշտպան ազգերի ժողովրդի Լեռնային Ղարաբաղում եւ շարունակում է արշավը՝ իր ձեռքում պահելու որոշ մասերը Ղարաբաղի, որն ադրբեջանական հող է եւ արդարորեն պատկանում է ազգերի ժողովրդին: Հայերն այնտեղ էին բնակեցվել Իոսիֆ Ստալինի՝ Խ. Միության ամենից ատելի կոմունիստ ղեկավարի կողմից:

Այսօր ադրբեջանցի ժողովուրդն է վճարում Ադրբեջանը բռնագրավված կոմունիստների հանցանքների գինը: Հայկական ներկա վարչակարգը փորձում է շարունակել Մոսկվայի իր նախկին ուսուցիչների ոգեշնչմամբ՝ ադրբեջանցի ժողովրդի դեմ անմարդկային արարքներ ի գործ դնել, անմեղ խաղաղասիրների դեմ լայնածավալ ջարդեր կազմակերպելով:

Այսօրվա աշխարհը տեղ չունի Հայաստանի բռնակալ Տեր-Պետրոսյանի նման ոճրագործների համար: Հետկոմունիստական աշխարհում տեղ չկա այն երկրների համար, որոնք ծգտում են զենքի ուժով իրենց սահմաններն ընդարձակել: ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպությունների որոշումները երբեք չեն ընդունվի նման արարքներ:

Այսօր մենք կոչ ենք հղում Օսլոյի մեր կառավարությանը՝ վերաքննահատելու իր դիրքը Հայաստանի ներկա վարչակարգի նկատմամբ, որը չի հարգել միջազգային օրենքները ու մարդու իրավունքները:

Մենք մեր կանադացի հայրենակիցներից պահանջում ենք գրել իրենց պատգամավորներին, որպեսզի գործնականում կիրառվի նրանց ձայնը եւ խոսացվեն բոլոր տեսակի հարաբերությունները հայկական վարչակարգի հետ՝ որպես բոլոր Լեռնային Ղարաբաղում նրա գործած վայրագությունների դեմ:

Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի ժողովրդին ի նպաստ ցույցի կազմակերպիչ հանձնախումբ»: ■

Արկերը պայթել են Իրանի տարածքում

Երեւան, 25 հուլիս, «Սնարք» – Հուլիսի 25-ի գիշեր Նախիջեւանի Հանրապետության տարածքից «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Հայաստանի հարավային շրջանի մի շարք գյուղեր: Կան ավերածություններ, զոհերի մասին տվյալներ չեն հաղորդվել:

Ինչպես տեղեկացրին «Սնարք»ի թղթակցին Հայաստանի պաշտպանության նախարարությունում, մի քանի արկեր ընկել են Իրանի տարածք եւ պայթել: ■

Հայաստանը պատրաստվում է մասնակցել շարժմանը

Երեւան, 27 հուլիս, «Սնարք» – Հայաստանը մտադիր է մասնակցել չմիանալու շարժմանը, հայտարարեց հանրապետության արտգործնախարարի տեղակալ Արման Նավասարդյանը: Կիրակի օրը նշելով հետաքրքրությամբ, նա հաղորդեց, որ Հայաստանը պատրաստվում է պաշտպանել դիմել այս տարի Ինդոնեզիայում կայանալիք չմիավորված երկրների համաժողովին՝ այդ շարժման մեջ ընդունվելու խնդրանքով: ■

Հայ մտավորականությունն առաջարկում է իշխանության իրականացման նոր մոդել

Երեկ խմբագրությունն այցելեցին մի խումբ մտավորականներ եւ հանձնեցին մի հայտարարություն, որ նրանք ընդունել էին շաբաթ օրը, հուլիսի 25-ին:

Ծրագրային այդ հայտարարության մեջ, *«Մտավորականությունը ծառայում է միայն ժողովրդին»* խորագրով, անվանի գիտնականներ, արվեստի գործիչներ, ստեղծագործական եւ գիտական միությունների ղեկավարներ, անկախ հանդեսների խմբագիրներ ճնշողական իշխանության ենթարկելով իշխող կուսակցության անհանդուրժողականությունը, ՀՀ նախագահի բացթողումները, առաջարկում են քաղաքական իշխանության իրականացման միանգամայն նոր՝ անցումային շրջանի համար ընդունելի մոդել:

Հայտարարության հեղինակների կարծիքով, *«քաղաքական կուսակցությունները մեծ մասամբ չեն արտահայտում որոշակի խավերի հետաքրքրությունները»*, այդ պատճառով *«անհրաժեշտ է միջկուսակցական համաձայնեցված քաղաքական կուրսից ծանրության կենտրոնը տեղափոխել դեպի զուտ մասնագիտական մոտեցումը: Կուսակցական ղեկավարին կամ ամբոխի դիրիժորին պետք է փոխարինի մասնագետը, գործին գիտակ մարդը: Մարդիկ վերջնականապես հոգնել են կուսակցական վեճերից եւ առճակատումներից: Կոմունիստական գաղափարախոսության վախճանից սկսած, բոլորս մենք ընդհանրապես հասկացել ենք, որ ճշմարտությունը չի կարող կուսակցական լինել: Ճշմարտությունն այնտեղ է, որ կան գիտելիքներ, փորձ, իրազեկություն»*, ասվում է հայտարարության մեջ: Հայտարարության հեղինակները *«կտրականապես մերժում եւ վտանգավոր են համարում փարիսեցիական բոլոր կեսամբանները, թե մտավորականությունը մի կողմ է քաշվել ժողովրդին հուզող խնդիրներից»*:

«Մենք հուսով ենք, այնուհետեւ շարունակում են նրանք, որ հասարակության լայն զանգվածները հասկանում են մեր տագնապները ամբողջությամբ եւ թույլ չեն տա, որ իրերի վիճակը նույնը մնա»: ■

CEMA
CENTRE DE MANAGEMENT D'ARMENIE

ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատը եւ ֆրանսիական «ԺԻԱ» հայկական միջմասնագիտական միությունը

տեղեկացնում են, որ 1992 թ. սեպտեմբերից իր ուսումնական երկրորդ տարին է սկսում Հայաստանի Սենեջմենթի «Սեմա» կենտրոնը, որի խնդիրն է պատրաստել մենեջմենթի բնագավառի կադրեր:

Դասախոսությունները բաղկացած կլինեն 13 մոդուլներից, յուրաքանչյուրը մեկ շաբաթ տեւողությամբ: Դասընթացները ադապտավորված են սինխրոն բարգմանությամբ: Դասընթացները կանցկացնեն Ֆրանսիայի փորձառու մասնագետները: ՍԵՄԱ կենտրոնը ձեր ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ ուսումնական տարվա վերջում դասախոսությունների ողջ ընթացքին մասնակցած ունկնդիրներին կընձեռվի հիանալի հնարավորություն մեկնել Ֆրանսիա վերապատրաստման: Հիշեցնում ենք նաեւ, որ «ՍԵՄԱ» կենտրոնին կից գործում են Ֆրանսերենի դասընթացներ:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 56 51 94, Հայաստանի Հանրապետության Առեւտրաարդյունաբերական պալատ Հասցեն Հանրապետության 39

ՊԱԿ-ը լսել է Ելցինի հեռախոսային խոսակցությունները

1989 թ. նախկին ԽՍՀՄ ՊԱԿ-ը սկսել է լսել Բորիս Ելցինի, նրա մերձավորների, ինչպես նաեւ նախկին ԽՍՀՄ խորհրդարանի միջռեգիոնալ խմբի հեռախոսային խոսակցությունները: Այդ մասին երկուշաբթի օրը Ռուսաստանի սահմանադրական դատարանում, որտեղ քննվում է Ռուսաստանի նախագահի՝ ԽՍԿԿ-ի եւ ՌԿՊ-ի գործունեությունը դադարեցնելու մասին հրամանագրի սահմանադրական լինելը, հայտնեց Ռուսաստանի նախկին Ֆեդերալ անվտանգության գործակալության ղեկավար Վիկտոր Իվանենկոն: Նրա խոսքերով, դա արվել է ՊԱԿ-ի նախագահ Վլադիմիր Կրյուչկովի բանավոր ցուցումի համաձայն: Բ. Ելցինի խոսակցությունների լսումը, ըստ Վ. Իվանենկոյի, նաեւ կատարվում էր «չնախատեսված տեղերում» թենիսի կորտում, հանդերձարանում եւ այլն: 1991 թ. օգոստոսի 15–21-ը ՊԱԿ-ի այն ժամանակվա ղեկավարի ցուցումով լսել են կառավարական կապի բոլոր բաժանորդների հեռախոսները, այդ թվում Գենսդի Բուրբուլիսի, Ռուսլան Խասբուլատովի, ինչպես նաեւ Գենսդի Յանաեւի եւ Անատոլի Լուկյանովի:

Վ. Իվանենկոն հաստատեց ահաբեկչական կազմակերպությունների հետ ԽՍԿԿ-ի կապի մասին տեղեկությունները: Ըստ նրա, վերջին անգամ 1987 թ. ՊԱԿ-ը ԽՍԿԿ ԿԿ որոշման համաձայն Պաղեստինի ազատագրության կազմակերպությանն (ՊԱԿ) է տվել 20 միլիոն ռուբլի արժողությամբ զենք: ■

«Թուրքերի հետ կենակցող» հայ կանանց եւ ոչ միայն այդ մասին

Թուրքական «Դյունյա» օրաթերթի հունիսի 25-ի համարում լրագրող Սելահադդին Գուրբեսլին գրում է.

«... Ինչեւէ, խոսքս հետեւյալի մասին է. հարգելի Ալաթոնը բազմիցս որակվեց որպես «հայերի կողմնակից»: Թե որքանով է դա իրական, վիճելի հարց է: Կարճ ասած, կրակի վրա յուղ թափվեց այս հարցում: *(Ալաթոնը հրեա ծագումով այն թուրք գործարարն էր, որ ամերիկահայ գործարար Հրայր Հովնանյանի հետ համատեղ ուզում էին Տրապիզոնի նավահանգիստն օգտագործել նաեւ հօգուտ Հայաստանի: Այդ ծրագիրն, ավաղ, խափանվեց թուրք հասարակական կարծիքի ճնշման տակ.- խմբ.)*:

Ասենք թե Ալաթոնը հայերի կողմնակից է: Շատ լավ, սակայն շրջանի թուրքերը *(Հայաստան-Թուրքիա սահմանի մոտիկ բնակչության մասին է խոսքը.- խմբ.)* մտածո՞ւմ են արդյոք, որ հենց իրենք են հայերի կողմնակիցը... Արդյոք գիտակցո՞ւմ են այդ: Ինչպե՞ս թե, պիտի հարցնեք: Աշխատեմ համառոտ բացատրել:

Սարբ (Բաթումի) սահմանային դռան բացվելուց ի վեր մեր երկիր, հատկապես Սեւ ծովի արեւելյան շրջան եկան եւ շարունակում են գալ հազարավոր հայաստանցիներ. տղամարդիկ զանազան ապրանքներ են վաճառում, իսկ կանայք իրենց մարմինը: Կանայք իրենց տված 1 որոշեանոց հաճույքի փոխարեն այնքան են ստանում, որ 1 ամսում չեն կարողանում վաստակել իրենց երկրում: 1 որոշեանոց հաճույքն արժե 330-400 ամերիկյան դոլար: Սրանք *(հայ կանանց մասին է.- խմբ.)* առնվազն 15-20 օր մնում են Թուրքիայում եւ այդ գումարները, ձեր կարծիքով, ի՞նչ են անում: Գնում են ամենաարդիական զենքեր ու դրանք ուղղում թուրքերի վրա: Այսինքն մեր տված փողերով գնված զենքը թուրքերին է սպանում: Իսկ մենք այս վիճակում ի՞նչ ենք շահում. միայն ու միայն մեկրոպեանոց հաճույք: Այսպիսով, արդյոք հենց մենք հայերին ամենից շատ օգնողի դերում չե՞նք հայտնվում:

Ալաթոնին դատապարտողները երբեք սրա մասին չեն մտածում: Ո՞ւր մնացին մեր ազգային զգացումները, ո՞ւր մնաց մեր փափկանկատությունը:

Այստեղ մի անգամ եւս ուզում եմ ընդգծել, որ քաղաքականությունն ու դիվանագիտությունը աջուցից բոլորովին տարբեր հասկացություններ են: Ավելի նրբանկատ լինենք եւ հոնը շտկելու տեղ աչքը չհանենք»:

Մենք փաստեր չունենք, թե հայ կանայք իրո՞ղ «վաճառում են իրենց մարմինները», չնայած այդ մասին «Դյունյա» թերթը չէ միայն, որ գրում է, եւ թե այս մեղադրանքը թուրքական թերթերին հատուկ հերքական հերյուրանք չէ՞: Սակայն ծուխն առանց կրակի չի լինում: Վերջում կուզենայինք բաժանել թուրք լրագրողի «լավատեսությունը», թե այդ ճանապարհով «աշխատած» դոլլարները գնում են զենքեր գնելուն...

Ր. Հ. Ա.

Լուրերի Հոսք

Շուշկեւիչ. Նոր քայլեր

Բելառուսի Գերագույն խորհրդի նախագահ Ստանիսլավ Շուշկեւիչը գրում է, որ *«ԱՊՀ-ին պետք են բազմաթիվ նոր համաձայնագրեր, քանի որ Հանրապետության շրջանակներում հնարավոր չէ արդյունավետ գործունեություն ծավալել»*: Բելառուսի կառավարական լրատվական գործակալությանը եւ ազգային հեռուստատեսությանը տված հարցազրույցներում նա առաջնային համարեց *«ԱՊՀ այնպիսի կառուցվածքի ստեղծումը, որը տնտեսական հարցերը համակարգող խորհրդատուի դեր կկատարի»*: Շուշկեւիչի խոսքերով, նման մարմնի ստեղծման մասին դեռեւս խոսվել է Բելովեժյան համաձայնման ընթացքում, բայց այն ժամանակ *«դիմադրում էին ցանկացած համակարգող կառույցի ստեղծմանը, որովհետեւ դեռեւս վերացված չէին հները»*:

Իսկ այժմ նրանք, ովքեր *«երդվել էին չթույլատրել որեւէ խորհրդի կամ կոմիտեի ստեղծում, իրենք են բարձրացնում այդ հարցը»*, հայտարարեց Բելառուսի Գխ նախագահը: ■

«Չեզոքացրել» են ռեկետիրներին

Ադրբեջանի ներքին գործերի նախարարությունը հայտնում է, որ Ադրբեջանի միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները Ասատայի շրջանի Շախսեւանի գյուղում հաջող գործողություններ կատարելով, չեզոքացրել են հանցագործ 30 ռեկետիրների: Հանցագործներից չորսը գինված դիմադրություն ցույց տալով միլիցիային, սպանվեցին, մյուսները ձերբակալվեցին: Հրազգության ժամանակ զոհվել են երկու միլիցիոներ: Բռնագրավվել է մեծ քանակությամբ հրազեն եւ դրամ ռուբլով ու վալյուտայով: ■

Կռիվներ ադրբեջանցիների հետ

Անցյալ շաբաթվա 3 օրը չէին դադարում զանգվածային անկարգությունները ու կռիվները Սայադոսկ քաղաքում (Խակասիայի հանրապետություն, Արեւելյան Սիբիրի հարավ): Ոստիկանության տվյալներով, կռիվների մասնակիցների թիվը երբեմն հասնում էր 1500-ի: Հուզումները ծագեցին բնիկ շինարարների եւ ադրբեջանցի գինեվաճառների ընդհարումից հետո, երբ վերջիններս պահանջեցին իրենց ապրանքին ջուր ավելացնել: Այրվել է 2 մեքենա, պայթեցվել է խանութներից մեկի գինու պահեստը: ■

Վաճառվում է

երեք սենյականոց բնակարան Կոմիտասի եւ Ազատության խաչմերուկի մոտ:
Հեռախոս՝ 22.34.40:

Լուրերը՝ interfax-ի, «Սնարքի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh® համակարգչային շարուածը Ռ.Ա.Կ. մակոյ եւ տեղեկատուբեան կենտրոնի

Azg Bi-daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 Editor H. AVEDIKIAN

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65 Դասիչ 69149
Տպաքանակ 20 000 Պատուէր 1518
Ստորագրուած է տպագրութեան 27.07.1992

digitised by A.R.A.R.@